

# ՍՍՈՒՆՅԱՍ ԹԵՐԻՔ

# Այունցյաց երկիր

Գինը 100 դրամ:

ՇԱԲԱԹ  
20 ՅՈՒՆԻՍԻ 2012Թ • № 17 (258)

www.syuniacyerkir.am

ՀԱՍՈՒ ՍԱՀՅԱՆ

Եվ դառնամ դարձյալ  
հողին աղոթեմ,  
Ամեն օր բացվող  
լույսին աղոթեմ...



ԱՆՎԱՆԻ ԳՈՐԻՍԵՏԻՆԵՐ  
ՍՈՒՐԵՆ ԲԱԿՈՒՆՑ - 100

«Հոգուդ սուկիրան դու բաց արած,  
Դու հարեհաս, բարի հոգի»

### ԴԻՄՆԱԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ

Ամեն մարդ այս աշխարհում իր առաքելությունն ունի: Եվ առաքելություն ասվածը ճակատագրի պես բան է: Ու երբ ծնվում է մարդը, նույն պահին էլ որոշվում է նրա առաքելությունն այս աշխարհում, նրա տեղը՝ ժամանակի լաբիրինթոսում: Ու երանի այն մարդուն, ով այս աշխարհում իր առաքելությամբ երկիր է պահում, երկիր շենացնում: Ու ժամանակը նրա օգտին է: Ու դատավոր ժամանակը դառնում է նրբավար, ու... որպես հաղթանակի նշան, նրա անունը ժամանակը միշտ հիշեցնում է: Ու մեր ժամանակի մեջ է Բակունց Սուրենը, նրա ներկայությունը կա մեր ժամանակի մեջ:

Լայն երեսով, հաղթահասակ, միշտ ժպտադեմ մի մարդ, ով իր տիրույթն ուներ՝ թե՛ գործնական, թե՛ բարոյական տեսանկյունից: Իսկ երբ գործնականն ու բարոյականը մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն են կազմում, ապա հնարավոր չէ սողոսկել այդ տիրույթի մեջ, քանզի այն դրսից կամ ներսից ու տիրույթում խառնաշփոթ ստեղծել: Բակունց Սուրեն մարդ արարածն իր տիրույթը ստեղծեց տարիների քրտնաջան, մվիրական աշխատանքի շնորհիվ, առ մարդը, առ աշխարհն ունեցած մեծ սիրո շնորհիվ: Սեր, որ այնքան շատ էր նրա մեջ, պոնկեպոունկ լեցուն, որ տալիս էր բոլորին, շաղ էր տալիս ամենուր, ու... չէր վերջանում:

Սուրեն Բակունցը ծնվել է Գորիսում, 1912թ. հունիսի 1-ին: Աշխատել է շատ վաղ տարիքից: Դաշտավար էր:

Ամառ էր: Շնկչնկան հովից ծփում էր դաշտը: Իսկ դաշտի ծոցիկից արեւի շողերի հետ սիրախաղ էին սկսել ծաղիկները: Ու ծորում էր անուշ մի մեղեդի, հոգեթով մի մեղեդի: Ու... դաշտում եռք էր, լեռներում խեղճության պարն ալեկոծել էր ամենքին: Սուրենը դաշտի ծոցիկից ծաղիկներ փնջեց: Վարսենիկը, ով աշխատում էր նրա կողքին, զարմացած նայեց Սուրենին. էս ո՞ր օրվանից է ծաղիկ սիրող դարձել:

– Վերցրու, քեզ համար են փնջել: Ուզում ես տար տուն՝ մամայիդ տուր, կամ գլխարկ հյուսիր, դիր գլխիդ, որ արելը երեսդ չվառի, – ասաց Սուրենը, եւ նրա դեմքը ողողվեց ժպիտով:

Եվ ժպիտն այդ սիրո խոստովանություն էր:

Վարսենիկը կարմրեց, շառագունեց, նրան թվաց, թե բոլորն իրեն են նայում, իսկ ինքը բռնվել է հանցանքի վայրում:

Յետո... էլ ոչինչ, ու ոչ մի խոսք: Մի օր էլ գնացին Վարսենիկենց տուն: Ու պսակեցին Վարսենիկին, տվեցին դաշտավար Սուրենին:

Մի օր էլ Սուրենը դարձավ ընկեր Բակունց: Նրան նշանակեցին Գորիսի կոլխոզի նախագահ: Այդ լուրը, երբ մայրն իմացավ, ծնկներին գարկեց, մագերը փետտեց, լաց ու կոծը դրեց:


– Սուրեն ջան, էր որ շուն շան որդին է քեզ նախագահ դրել: Նրա այքը դուրս գա: Երանի թե մեռնեի ու էր լուրը չլսեի:

Այդպես խոսելու հիմք Շարմաղ մայրիկն ուներ: Դաժան տարիներ էին, թացը չորից չէին ջոկում: Թե մարդուն ցերեկն էին նախագահ նշանակում, գիշերն էին Սիրիո թշուն, թե գիշերն էին նշանակում, ցերեկն էին Սիրիո թշուն: Աչքը տեսածից էր վախենում: Շարմաղ մայրիկը վախենում էր, որ որդուն էլ Սիրիո կքշեն:


Բայց... ժամանակի մարտահրավերներին դիմակայեց Սուրենը: Նրա օրոք կոլխոզը բավականին առաջընթաց ապրեց: Ու պիտի նրա ձեռքով առաջընթացը շարունակվեր, բայց պատերազմ սկսվեց: Սուրենն իր տեղը չէր գտնում, կռվի դաշտը կանչում էր նրան:

Շարունակությունը՝ էջ 3





Ընծայագրեր Սուրեն Բակունցին



«Մարյան եղելությանց» վեպ


Իմ հին բարեկամ, մեր ձորերը շեն պահող, մեր ձորերի նահապետ Սուրեն Բակունցին: ՍԵՐՈ ԽԱՆՁԱՐՅԱՆ 10.11.1966թ.

«Ամերեկից հեպո» վիպակ

Սուրեն, սիրելի, այս գիրքը նվիրում եմ «Կարսենիկին եւ քեզ: Միգուցե սա իմ վերջին գիրքն է: Ծանր է, Սուրեն ջան, բայց կտանես Գորիս» իմ պապերի գերեզմանում թաղելու: ՍԵՐՈ ԽԱՆՁԱՐՅԱՆ 1969թ.

«Միսիթար Սպարապետ» վեպ

Սուրեն Բակունցին՝ եղբայրական սիրով, փառավոր 70-ամյակի կապակցությամբ նվիրում եմ իմ այս գիրքը: ՍԵՐՈ ԽԱՆՁԱՐՅԱՆ 27.06.1982թ.



«Լեռները կանչում են» գիրք

Ռանչպարի հացի բույրով, Հորովելի մրմունջներով, Հոգուդ սուփրան դու բաց արած, Բարի-բարի անուրջներով: Դու հարեհաս, բարի հոգի, Կյանքիդ ճամփան թող երկարի: Անհուն սիրով նվիրում եմ իմ շար սիրելի Սուրեն Բակունցին ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ 10.01.1989թ.

«Սիրո կրակներ» գիրք

Հորադ էիր լծի թելին, Հորովելը քո շուրթերին, Հացի բույրը, հողի թույրը, Արարող քո ձեռքերին: Միրելի Սուրեն Բակունցին՝ բարի ցանկություններով: ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ 27.06.1982թ.



«Ակսել Բակունց, երկեր, հատոր II» գիրք

Միրելի ու հարազատ Սուրեն Բակունցին՝ ամենայն բարի ցանկություններով: ՍԵՎԱԿԱ ԲԱԿՈՒՆՅԱՆ 21.07.1980թ.

Նա մնայուն հետք է թողել



ՍՈՒՐԵՆ ԽԱՆՁԱՐՅԱՆ Այունիքի մարզպետ

ԽՈՍՔ ՀՈՔԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Սուրեն Բակունցի ողջ գիտակցական կյանքը մի նվիրաբերում է հայրենի եզերքի շենացմանը, եւ առանց երկբայության կարող ենք ասել, որ 20-րդ դարի Գորիսի տարեգրության մեջ նշանակալի դերակատարում ունի: Աչք է բացել Գորիսում, սկսել հողի մշակի իր գործունեությունը, մասնակցել երկրորդ աշխարհամարտին: Իր բաժին պատերազմն ավարտելուց հետո մինչեւ վաստակած հանգստի անցնելն աշխատել է «Ավանգարդ» տնտեսությունում՝ ղեկավարելով այն: Աղքատին, սոցիալապես անապահովին օգնության ձեռք մեկնող անձնավորություն էր, ենթակամերի պատիվը բարձր պահող, նրանց տեղն ու դերն իմացող ղեկավար: Գորիսում տարածված մի կարծիք կա. Բակունց Սուրենի աշխատանքային գործունեության 50 տարվա ընթացքում տնտեսությունից ոչ մի մարդ չի դատվել: Խորհրդային տարիներին էլ հանրային ունեցվածքից մի բան թռցնողներ են եղել. ինչ-որ մեկը ստիպված է եղել անօրինական քայլ անել: Բայց նա բոլորին ներել գիտեր, թույլ չէր տա, որ իր աշխատողներին տանեին, բանտ նստեցնեին: Ինքն էր պատժում ու դաստիարակում մարդկանց: Կողմնակից էր մարդուն ոչ թե պատժելուն, այլ դարձի բերելուն, խտոր ճանապարհից հետ պահելուն: 1973-ին՝ դարոցն ավարտելուց հետո, մի կարճ ժամանակ աշխատել են «Ավանգարդ» խորհրդատեսությունում՝ մեխանիկ: Հնարավորություն ունեցա ավելի մոտիկից ծանոթանալ նրան, նրա աշխատատեղին: Առավոտ կանուխ՝ ժամը հինգին էր արթնանում, միշտ ոտքով հասնում աշխատատեղ: Դեռեւս նախորդ օրն աշխատանքի բաժանում էր կատարել, յուրաքանչյուրը գիտեր իր անելիքը: Հեռվից նկատում էր՝ ով աշխատատեղում չէ, ում մեքենան պարապուրդի է մատնված: Երբեմն բարկանում էր, որ իր հանձնարարությունը չեն կատարում, բայց սրտում քեն չէր պահում: Գուցե ոմանց թվում էր, թե մոռացել է իր հանձնարարությունը, բայց բնավ այդպես չէր: Բնավորությամբ մարդամոտ էր, էությունը՝ մարդկային: Չկար մեկը, որ նրան մի բան խնդրեր եւ մերժում ստանար: Առանց խնդրելու էլ հստակ գիտեր յուրաքանչյուրի սոցիալական վիճակը եւ հաճախ ինքն էր ասում. «Եսինքն լավ չի ապրում, տարեք՝ տանը մի բան թողեք»: Սուրեն Բակունցը լավ շրջապատ ուներ,

սեղանի հաճելի ընկեր էր եւ, բնականաբար, եթե սեղանի շուրջ էր, պիտի թանաղայություն աներ: Այսպիսի մի պատմություն էլ են պատմում. երբ տնտեսության ղեկավար նշանակելու մասին հայտնել է տանը, մայրը ոչ միայն ընդդիմացել, այլեւ մի լավ ճիպտաստարել է, թե ինչու է համաձայնել: Քանզի կյանքի բովով անցած այդ կինը գիտակցում էր, թե «Ավանգարդ» տնտեսությունն ինչ կարելու դերակատարություն ունի Գորիսի տարածաշրջանի կյանքում, թե ինչ պատասխանատվություն է ենթադրում Գորիսի տնտեսությունը ղեկավարելը: Բայց մոր մտավախությունը շատ շուտով փարատվեց, քանզի բոլորն էլ գոհ էին նրա աշխատանքից, եւ մեծավ մասամբ արդարացրեց շատ ու շատերի սպասելիքները: Կյանքում ակտիվ դիրքորոշում ուներ, խորապես տեղեկացված էր երկրի հասարակական-քաղաքական կյանքից: Մայրաքաղաքում էլ Սուրեն Բակունցը մեծ կապեր ուներ, եւ այդ հանգամանքը նույնպես օգտագործում էր բնակչությանը հուզող խնդիրներին լուծում տալու համար: Ահա այս ամենը ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ Սուրեն Բակունցը մնայուն հետք է թողել իր երկրամասի պատմության մեջ: Հարգանք նրա հիշատակին:





## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ՝ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Սիսիանում Հանրապետականի թեկնածուն Սամվել Թանգյանն է

**Ի**նչպես քանիցս նշել ենք մեր թերթում, առաջիկա ՏԻՄ ընտրությունները կանցնեն ՀՀ ընտրական օրենսգրքում կարգավորված փոփոխություններով: Ըստ դրանցից մեկի (հոդված 133/1)՝ համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուներ կարող են առաջադրել կուսակցությունները, ինչպես նաեւ ընտրվելու իրավունք ունեցող քաղաքացիները՝ ինքնառաջադրման կարգով (նախկինում կուսակցություններն այդ իրավունքը չուներին): Այդ փոփոխության արդյունքներն արդեն իսկ որոշ գարգացումների փուլից են փոխվել, թեեւ մինչեւ առաջադրումներ դեռ բավականին ժամանակ կա (առաջադրումները փուլի կունենան ս.թ. օգոստոսի 5-10-ը): **ՀՀ Սիսիանի խորհուրդը հունիսի 14-ին Սիսիանի քաղաքապետի թեկնածու է առաջադրել Սամվել Թանգյանին, ով 2011թ. մարտի 25-ից Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետն է, ով ՀՀ Սիսիանի շրջանային խորհրդի նախագահն է, 2005-2011թթ. եղել է Սյունիքի մարզպետի օգնականը: Նա գյուղատնտեսության ոլորտում ղեկավար աշխատանքի երկարամյա փորձ ունի. ժամանակին գլխավորել է Բռնակոթի, Գոռհայքի, Աշտարակի տնտեսությունները, Սիսիանի հացամթերման ձեռնարկությունը: Ծնվել է 1957թ. Բռնակոթում, ավարտել է Երեւանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական, ապա անասնաբուժական ֆակուլտետները: Նրա հետ այսօրվա հարցազրույցը ՀՀ շրջանային խորհրդի հունիսի 14-ի որոշման դրությամբ ձեռնարկված ընտրություններում Սիսիանի քաղաքապետ ընտրվելու նրա մրարդության ու ծրագրերի մասին է:**

ներուժ: – Բայց Դուք հիմա բավականին բարձր պաշտոն եք վարում՝ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետն եք, չե՞ք կարծում, որ Ձեր կարիքն այդ ոլորտում ավելի շատ է զգացվում, եւ այդ ոլորտն էլ փորձառու կարգերի կարիք ունի: – Իսկապես՝ մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետը մարզի մասշտաբով բավականին բարձր պաշտոն է եւ լուրջ անելիքներ ունի գյուղատնտեսության ու հատկապես գյուղատնտեսության ոլորտներում: Եվ ես հաճույքով ու բարձր պատասխանատվությամբ եմ կատարում պարտականություններս: Սակայն, Սիսիան քաղաքի բազմաթիվ ընտրողներ շարունակում են առաջարկել ինձ՝ առաջադրվելու քաղաքապետի թեկնածու: Ինչպես վերելում եմ շեղանք, այդպես եմ մտածում նաեւ ՀՀ-ի շրջանային խորհրդի անդամները, մեր կուսակցության շարքային անդամները: Անկեղծ ասած՝ ես էլ եմ կարծում, որ Սիսիանին ու սիսիանցիներին կարող եմ օգտակար լինել, նրանց տալու բան ունեմ, որ կարող եմ դրակազմերն փոխել Սիսիանի գարգացման ընթացքը:

– ՀՀ-ն Ձեր թեկնածությունն առաջադրելով, փաստորեն, հավակնում է իր անդամին տեսնել Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնում:

– Այդպես է, եւ այդ դիրքորոշումն ինքնանպատակ չէ: Խորապես համոզված եմ, որ նման դիրքորոշումը բխում է Սիսիանի համայնքի շահերից: Ուզում եմ մի պահ վերանայնալ անձերից եւ խնդիրը բնականաբար չուրջան մեջ՝ ներկա քաղաքական դրության համայնքային կառավարչության անձնատարբեր օղակներ հասցնելու գործում: Եթե նույնիսկ ասվածի մեջ սուբյեկտիվիզմ կա, ապա, միեւնույն է, դա իրողությունն է, որն անտեսել չենք կարող: Այսինքն՝ Սիսիանի շահը՝ մեր ընթացքի ներկա փուլում, պահանջում է, որ համայնքը ղեկավարի ՀՀ-ի ներկայացուցիչը: Ասվածն ուղղակիորեն հաստատում է վերջին չորս տարվա ընթացքում Սիսիանում կատարված աշխատանքների համեստ ծավալը, որ կարող էր նկատվել իրեն շատ լինել, եթե Սիսիանը գլխավորեր Հանրապետականի ներկայացուցիչը, եթե քաղաքապետը հակասություններ չունենար գործադիրի տարբեր օղակների հետ: Ցավոք, Սիսիանն անցած չորս տարում շատ բան կորցրեց այդ պատճառով:

– Սիսիանում, անկեղծ լինե՞ք, Դուք լավ մարդու, լավ սիսիանցու համբավ ունե՞ք: Բայց ահա, հաշվի առնելով մարզպետարանում 2005 թվականից աշխատելու շրջանը, Ձեզ Սիսիանում ինքնուրույն խաղացող չե՞ն համարում շատերը: Եվ իբր, Ձեր ընտրվելու դեպքում, Սիսիանի քաղաքապետարանը կկորցնի ինքնուրույն գործելու ընդհանրությունը:

– 1981 թվականից, երբ դեռ



24 տարեկան էի, իմ գործունեությունը սիսիանցիների աչքի առջեւ է: Եվ մարդիկ գիտեն իմ ունակությունները, կազմակերպչական հմտարվորությունների, սկզբունքային մասին: Իսկ եթե ոմանք փորձում են ոչ ինքնուրույն գործի պիտակ կացնել ինձ, ապա դա սովորական չարախոսություն է: Աշխատել մարզպետարանում՝ նշանակում է աշխատել կոնկրետ թիմում, ինչն ինձ համար պատիվ է: Իսկ թիմում աշխատել՝ նշանակում է աշխատել թիմի կանոններով, նշանակում է ժամանակին եւ ճիշտ կատարել մարզպետի հանձնարարականները, մարզպետարանի կանոնադրությամբ ինձ վերապահված լիազորությունները: 2005-ից մարզպետ Սուրեն Խաչատրյանն ինձ վրա է դրել Սիսիանի շրջանում իրականացվող տարածքային քաղաքականությունը համակարգողի պարտականությունները: Եվ ես, ի պաշտոնե, այդ ընթացքում առկա ու ծագող հարցերը ներկայացրել եմ մարզպետին, նաեւ առաջարկություններ եմ ներկայացրել Սիսիանի շրջանի գարգացման վերաբերյալ: Հուրախություն սիսիանցիների պիտի ընել, որ բարձրացված բոլոր հարցերը (անձնակազմից մինչեւ համայնքային նշանակության հարցեր) դրական լուծում են ստացել: Չլինե՞ր համագործակցված աշխատանքը, չլինե՞ր մարզպետի շահագրգիռ վերաբերմունքը Սիսիանի հիմնախնդիրներին՝ այդքան հարցեր չէին լուծվի համայնքում: Ասվածը հավաստող մեկ օրինակ՝ ընթացիկ հունիս-հուլիս ամիսներին մարզպետի նախաձեռնությամբ Սիսիանում կատարվել է կատարվում է մոտ 160 մլն դրամի ասֆալտապատման աշխատանք, ինչը շարունակություն է ունենալու: Մի հանգամանք էլ. հաշվի առնելով Սիսիանի հեռավորությունը մարզկենտրոնից, բոլոր դիմումատուների խնդիրը բնակարկվել է տեղում՝ Սի-

նիշը, թե ապագա քաղաքապետն ինչ հնարավորություններ, քաղաքական, բարոյական ինչ ռեսուրսներ ունի՝ համայնքի առջեւ ծառայած խնդիրները լուծելու համար: Մի բան էլ՝ որքան մեծ լինի ընտրողների կատարության աստիճանը, այնքան ուժեղ կլինի ապագա քաղաքապետը:

– Ըստ մամուլում շրջանառվող խոսակցությունների՝ ՀՀ բարձր ղեկավարությունը կարող է քաղաքական որոշում կայացնել եւ սեպտեմբերի 9-ի ընտրություններում չպայքարել ՀՀ-ական համայնքապետների դեմ, ասել է թե՛ Աղասի Հակոբջանյան (Սիսիանի դեպրուտ) ոչ միայն չհանձնարել, այլեւ գորակցել: Ավելին, ասում են, թե արդեն իսկ մամուլում կայացվել:

– Ուզում եմ նկատի ունենալ կարելու մի իրողություն, որի մասին քիչ առաջ խոսեցինք: Ոչ միայն ես՝ Սամվել Թանգյանս եմ ուզում դառնալ Սիսիանի քաղաքապետ, այլեւ ՀՀ-ի Սիսիանի շրջանային կազմակերպության ցանկությունն է դա, ինչը եւ արտացոլված է խորհրդի ընդունած որոշման մեջ: Մինչեւ որոշման ընդունումը միգրացիոն արժեք ունեցող շրջանային մամուլի անկոնստենտներ, բայց հիմա... Իհարկե, ոչինչ չի կարելի բացառել, բայց մամուլ գարգացում, ինչի մասին ակնարկեցիք, չեն պատկերացնում, քանզի Սիսիանում մեծապիվա է դրված նախեսառաջ ՀՀ-ի հեղինակությունը: Շրջանառվող անկոնստենտները, որոնք սովորաբար անստորագիր են լինում եւ առանց սկզբնաղբյուր մատուցող անելու, ավելի շատ պարզունակ ապատեղեկատվություն են, ընտրազանգվածին մոլորեցնելու անօգուտ փորձեր: Դա մեկ անգամ են ջուլ է տալիս, որ մարդիկ, հանուն իշխանության, խտրություն չեն դնում միջոցների միջե:

– Քաղաքապետ ընտրվելու ցանկություն հայտնել՝ նշանակում է համայնքի ղեկավարի գործերի ներկա վիճակի հետ, նշանակում է ինչ-որ բան փոխելու մտադրություն ունենալ: Եվ ուրեմն՝ ինչի՞ հետ Դուք համաձայն չեք, ի՞նչն էք ուզում փոխել Սիսիանում, որո՞նք են առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները:

– Նախեսառաջ Սիսիանի քաղաքային իշխանության դերի եւ հեղինակության բարձրացման կարիք ունենք: Սիսիանի քաղաքային իշխանության եւ հանրապետության գործադիր իշխանության վերադաս մարմինների միջեւ համագործակցության մոլորակները ձեւավորման կարիք ունենք: Սիսիանը հանրապետության ամենաշակութային, ամենախնամելիք ունեցող տեղումն է (հատկապես գյուղատնտեսական) ներուժ ունեցող շրջաններից մեկն է, եթե ոչ առաջինը: Ուստի՝ Սիսիանի քաղաքապետարանը պետք է այդ ամենին համահունչ գործելակերպ դրսևորի, համայնքը կարողանա արժանի տեղ գրավել ինչպես հանրապետության հոգեւոր, մշակութային, սոցիալ-տնտեսական կյանքում: Եվ համայնքը պետք է այդ ամենին համապատասխան ուշադրության արժանանա նաեւ ներդրումների համայնքում: Սիսիանի հասարակական մթնոլորտն առողջացման կարիք ունի: Քաղաքական հարցերում եւ ծրագրերում մենք կարող ենք միասին չլինել եւ տարբեր կարծիքներ դավանել: Բայց համայնքային հարցերում, մարդկային հարաբերություններում միմյանց հանդեպ պիտի շիտակ լինենք: Իսկ այդ մտածելակերպի ու գործելակերպի առաջատար պետք է քաղաքապետն ու քաղաքապետարանն լինեն: Սիսիանի քաղաքապետարանը պետք է դուրս գա հավեր-





# Կնքվեց փոխըմբռնման հուշագիր



## ՍՅՈՒՆԻՔ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

**Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը հուլիսի 10-ին ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Արդապարականի նահանգապետ Ալիռեզա Բեյգիի գլխավորած**

**պարվիրակությանը: Հիմք ընդունելով հայ-իրանական միջկառավարական պայմանավորվածությունները, նպատակ ունենալով խթանել միջմարզային համագործակցությունը տեղական ինքնակառավարման, կրթության, մշակույթի, առողջապահության, տնտեսության, առևտրի, սպորտի, գյու-**

**ղարկությունների և բնապահպանության, զբոսաշրջության բնագավառներում, Սյունիքի մարզի եւ Արևելյան Արդապարականի նահանգի միջև Գորիս քաղաքում 2012թ. հուլիսի 10-ին կնքվեց փոխըմբռնման հուշագիր, որը սպորտադրեցիմ Սուրիկ Խաչատրյանը եւ Ալիռեզա Բեյգի:**

Ըստ հուշագրի՝ երկու երկրների վարչատարածքային միավորների տնտեսությունների տարբեր ոլորտներում պետք է շարունակել առկա պայմանավորվածությունները եւ ձեռք բերել համաձայնություններ նոր ոլորտներում: Մասնավորապես, հայկական կողմի առաջարկով քննարկվեց երկու երկրի միջև տրանսպորտային միջոցների

երթնեկությունն առավել մատչելի դարձնելու հարցը: Դարձյալ հայկական կողմի առաջարկով իրանական կողմը պատրաստակամություն հայտնեց իրանական ներդրողներին ներկայացնել Սյունիքի մարզի Գորիսի շրջանում սպանդանոցի եւ Սիսիանի շրջանում համակցված կերերի արտադրության համատեղ ձեռնարկություններ հիմնելու նախագծերը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հանդիպումներն ու փոխայցելությունները դարձնել շարունակական: Համաձայնելով, որ երկու մարզի փոխգործակցությունը լավ հեռանկար է մեծ ներուժ ունի՝ մարզպետ Ս.Խաչատրյանը նշեց, որ հնարավորինս կնպաստի համագործակցության շրջանակի ընդլայնմանը, ինչպես նաեւ հույս հայտնեց, որ երկու պետության որդեգրած քաղաքականությունը կնպաստի տնտեսական կապերի խորացմանը եւ երկկողմ հարաբերությունների աշխուժացմանը: Կողմերը կարելի էր անվերջում հյուպատոսություններ ստեղծելու մասին ճշմարտացի ձեռք բերված համաձայնությունը եւ պատրաստակամություն հայտնեցին ջանքեր գործադրել համապատասխան ատյանների միջոցով այն իրականություն դարձնելու համար: Ձեռք բերված համաձայնությունների իրագործման նպատակով Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանն Իրանի իր գործընկերոջից Արեւելյան Արդապարականի նահանգայցելելու հրավեր ստացավ:

**Սյունիքի մարզպետարանի տեղակալության եւ հասարակայնության հետ կապերի բաժին**

# Կապանի պարվիրակությունը Բելառուսում

Կապանի եւ Բելառուսի Հանրապետության Բորիսով քաղաքի համագործակցության հիմքերը դրվել են 2008-ի դեկտեմբերին, երբ Սյունիքի քաղաքային համայնքների ղեկավարները Սյունիքի մարզպետի գլխավորությամբ մեկնեցին Մինսկի մարզ, եւ կնքվեցին փոխհամագործակցության պայմանագրեր: Արդեն երրորդ անգամ Կապանի պարվիրակությունը այցելում է Բորիսով՝ այդ քաղաքի շրջգործկոմի նախագահ Վլադիմիր Միրանովիչի հրավերով: Այս անգամվա այցը հանդնակավ Բելառուսական քաղաքի հիմնադրման 910-ամյակին, որ նշվեց հուլիսի 2-ին, իսկ հուլիսի 3-ին նշվեց Բելառուսի Հանրապետության անկախության հռչակման տոնը: Այդ իրադարձությունների առթիվ Կապանի քաղաքապետ Արտուր Աբայանը շնորհավորանքի խոսք է հղել բորիսովցիներին եւ Բելառուսի ժողովրդին առհասարակ: Տպավորիչ էր Բորիսովի կենտրոնա-

կան հրապարակում կազմակերպված «Օրհներգը երգենք միասին» ակցիան: Ինչպես «Սյունյաց երկրի» հետ զրույցում նշեց Արտուր Աբայանը, Բորիսով քաղաքի տոնին նվիրված հանդիսությունը տպավորիչ էր, կազմակերպվել էր ցուցահանդես-վաճառք, որում ներկայացված էր քաղաքում թողարկվող արտադրանքը՝ ռազմական տեխնիկայից մինչեւ կենցաղային պարագաներ: Տոնական համերգին հրավիրվել էր հանրահայտ երգիչ Լեւ Լեշչենկոն: Բորիսովում Կապանի քաղաքապետը եւ նրա խորհրդական Գագիկ Հովհաննիսյանը հանդիպել են տեղի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ, քննարկվել են երկու քաղաքների համագործակցության խնդիրները: Մշակութային եւ սպորտային ոլորտում համագործակցության պայմանավորվածություններ են ձեռք բերվել Բորիսովի համայնքային իշխանությունների հետ:



Արտուր Աբայանի փոխանցմամբ հոկտեմբերին սպասվում է Բորիսովի պարվիրակության փոխադարձ

այցը Կապան, եւ այդժամ կիստակեցվեն ձեռք բերված պայմանավորվածությունները: Կապանի քաղա-

քապետը հատկապես տպավորված էր նրանով, որ Բորիսովում գործում է 44 արդյունաբերական ձեռնարկություն, եւ այդտեղ գործազրկության խնդիր գործնականում գոյություն չունի: Իսկ արդյունաբերական ձեռնարկությունների մասհամունները տեղական բյուջեին հնարավորություն են ընձեռում լիովին լուծել քաղաքային տնտեսության առջեւ ծառայած խնդիրները: Քաղաքում կա բեռնատար եւ մարդատար ավտոմոբիլների ստարտերների եւ գեներատորների նախագծման եւ արտադրության հզոր ձեռնարկություն, գործում են տրիկոտաժի, էլեկտրասարքավորումների, պոլիմերային տարաների արտադրություններ: Դե իսկ բորիսովցիներն անթաքույց հպարտանում են քաղաքի՝ չեմպիոնների լիգայի մասնակից «PUS» ֆուտբոլային ակումբով, որի հետ եվրալիգայի գավաթի խաղարկության շրջանակում հանդիպել են հայ ֆուտբոլիստները:

Կապանի պարվիրակության այցը լուսաբանվել է տեղական լրատվամիջոցներով:

**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

ժական «ռազերկաների» լաբիրինթոսից: Ունենք նաեւ Սիսիանի քաղաքային տնտեսության վիճակը փոխելու հիմնախնդիր՝ անբարեկարգ փողոցներ, սանիտարական անհարմար վիճակ, աղբահանության խնդիր, ծայրամասային փողոցների գիշերային լուսավորության բացակայություն...

– **Հիմա արդեն կարելի է ասել, որ ՀՀ Սիսիանի խորհուրդն ակտիվ մեկնարկով սկսել է տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա ընտրությունների նախապատրաստությունը:** Կարո՞ղ ենք ենթադրել, որ Ձեր գլխավորած կուսակցական խորհուրդը թեկնածուներ կառաջադրի նաեւ Սիսիանի ավագանու անդամի համար:  
– Անպայման կունենանք նաեւ ավագանու անդամի մեր թեկնածու-

ները: Այդ ուղղությամբ խորհրդում քննարկումներ են տեղի ունենում, ինչի արդյունքների մասին մինչեւ առաջադրումներ սկսելը Դուք կիմանաք: Նույնը կարող եմ ասել նաեւ Սիսիանի շրջանի գյուղական համայնքների ղեկավարների ընտրության հարցում: Մենք բոլոր համայնքներում կունենանք գյուղապետի մեր թեկնածուն եւ ակտիվ ընտրապայքարով կծգտենք ապահովել նրանց հարթակը:  
– **ՀՀ-ի քաղաքական, նախընտրական թիմն Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում վատ աշխատեց Սիսիանում:** Այդ նույն թիմով եք մասնակցելու սեպտեմբերի 9-ի ընտրություններին:  
– Սեպտեմբերի 9-ի ընտրություններին ընդառաջ եմք գնում միան-

գամայն նոր թիմով եւ նոր մարտավարությամբ, քարոզչական նոր գործելակերպով: Օգոստոսի 15-ից կմեկնարկի (եթե չեն սխալվում) քարոզարշավը, եւ Դուք կհամոզվեք դրանում: Մենք նաեւ նոր, Սիսիանի հիմնախնդիրների լուծման ուղիները մատնանշող արդիական եւ իրատեսական նախընտրական ծրագիր կառաջարկենք, որը, վերջին հաշվով, կլրացվի ընտրողների հետ հանդիպման ժամանակ բարձրացված հարցերով:  
– **Իսկ ի՞նչ կարծիք ունեք Ձեր հնարավոր մրցակիցների մասին, չէ՞ որ արդեն հավանական թեկնածուների անունները շրջանառվում են՝ Աղասի Հակոբջանյան, Գառնիկ Հովակիմյան, Տիգրան Պողոսյան...**  
– Քանի որ առաջադրումներ չեն եղել դեռեւս՝ հասկանալի պատճա-

ռով, քանի դեռ որեւէ մեկը կամ որեւէ կուսակցություն պաշտոնապես հայտարարություն չի արել առաջադրումների վերաբերյալ, ուստի եւ կոռեկտ չէր լինի նրանց մասին (իբրեւ քաղաքապետի թեկնածուի) կարծիք հայտնել: Միգուցե ուրիշ թեկնածուներ էլ լինեն: Թող առաջադրվեն, եւ այն ժամանակ ավելի առաքյալական ու հասցեական խոսք կհնչեցնենք, եթե դրա կարիքը լինի:  
– **Սուտ մեկուկես ամիս առաջ մեր թերթի լրագրողը Ձեզ հետ զրույցի ընթացքում փորձեց իմանալ, թե մայիսի 6-ի ընտրությունների արդյունքում Սիսիանում ձեւավորված ուժերի նոր հարաբերակցությունը որքանով կանդրադառնա առաջիկա ՏԻՄ ընտրություններին: Դուք բացառեցիք հավանականությունը, որ մայիսի 6-ին երեւան եկած ուժերի**

**հարաբերակցությունը կապահավակի քաղաքապետի ընտրության ընթացքում: Հիմա՞ էլ այդ կարծիքին եք:**  
– Իհարկե այդ կարծիքին եմ: Եվ դա բնորոշ է ոչ միայն Սիսիանին, այլեւ մյուս համայնքներին: ՏԻՄ ընտրությունների ընթացքում բոլորովին այլ սկզբունքներ են գործում, բոլորովին այլ խնդիրներ են իրենց առջեւ դնում ընտրողները: Հի կարելի նույնացնել նաեւ Աժ ընտրությունները ՀՀ նախագահի ընտրության հետ: Նաեւ մայիսի 6-ի ընտրություններից հետո շատ բան է փոխվել ոչ միայն հանրապետությունում, այլեւ Սիսիանում: Ընտրողները ոչ թե խոսքեր, այլ կոնկրետ գործեր են պահանջում, իսկ մենք գալիս ենք աշխատելու...  
**Հարցազրույցը՝ ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

# Վարդանիծորում 20 տարի հետո անգամ մարդիկ իրենց փախստական են համարում

Հարցազրույց Վարդանիծորի գյուղապետ Ալբերտ Բեկլարյանի հետ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Մեղրու շրջանի Վարդանիծոր գյուղը մինչև 1988 թիվն ամբողջովին արդրե- ջանաբնակ է եղել, ապա՝ բնակեցվել է Բաքվից եկած գաղթականներով: Համայնքի մեջ են մտնում Վարդանի- ծոր, Նոր Թխկուտ (նախկինում՝ Մարալզամի), Այգեծոր, իսկ 2010 թվից նաև Վանք եւ Կալեր գյուղերի տարածք- ները: Այդտեղ բնակվում է 130 ընտանիք՝ 340 բնակչությամբ: Վարդանիծորի հա- մայնքը զբաղեցնում է 9312.08 հա տա- րածք: Գործում է միջնակարգ դպրոց, ուր հաճախում է 30 երեխա, այն կառուց- վել է 2007 թվականին: Ֆինանսական սղության պատճառով մանկապարտե- զը չի գործում: Գյուղի տարածքում են գտնվում կաթնամթերքի արտադրության «Մեղրիկաթ» ընկերությունը, «Սիփան 1» ՄՊԸ-ի ոսկու կորզման ֆաբրիկան, «Կա- լեր մայինիգ» ընկերությունը (զբաղվում է քարարտադրությամբ): Այժմ Վերին Վարդանիծորում «Ղարազուլյաններ» ՄՊԸ-ն 400 հա տարածքում կատարում է հետախուզական աշխատանքներ, պայ- մանագիրը կնքված է 28 տարով, եւ հնա- րավոր է ապագայում ոսկու հանքավայր շահագործվի այնտեղ: Հետազոտման աշխատանքները սկսվել են 2010թ., տա- րեկան վարձակալության գումար վճա- րում են 1,2 մլն դրամ: Այգեծոր գյուղի տարածքում կատարվում են պղնձի եւ գունավոր մետաղների որոնման ու հե- տազոտման աշխատանքներ՝ «Ալտուի լեռնագործ» ընկերության կողմից: «Սա- զամար» ՓԲԸ-ի հետ էլ առաջիկայում կնքվելու է 5 հա տարածքի վարձակա- ւության պայմանագիր: Գյուղի տարած- քում կատարված է հողահատակացում՝ երկու հեկտար տեղում համար, հեկտրի սեփականատերերն են «Գրիար» ՓԲ եւ «Էմփաթա» ՄՊ ընկերությունները: Եր- րորդ հեկտրի մասին եւս խոսք կա, սակայն դեռեւս պայմանավորվածություն ձեռք չի բերվել: Վարդանիծոր համայնքում այս պահի դրությամբ 814 հա հող հանձնված է վարձակալության, որից համայնքը տարեկան ստանում է մոտ 3 մլն դրամ եկամուտ: 2010 թվականից Վարդանի- ծորի տարածքի մեջ մտան նաև Վանք, Կալեր գյուղերի տարածքները, ինչպես նաև Արեւիք ազգային պարկի մի մասը:



գում է: Մարդիկ չեն հասցնում նույնիսկ այդ խնդիրների մասին մտածել, քանի որ նրանց համար առաջնահերթ են աշխա- տանք ունենալն է, ինչի կարիքն ամենից ավելի է զգացվում: Իմ կարծիքով ընդեր- քի ողջամիտ օգտագործումից վնաս չկա, եւ ամենակարեւորը՝ գյուղի տարածքում պոչուկային տնտեսություն չունենք, իսկ «Սազամար» ընկերության հետ պայմա- նագրում նշված է, որ իրենք իրենք տե- դակոխելու են:

– **Խոսք կա, թե պոչամբարի կառուց- ման համար թաղում համաձայնություն կա Ձեր եւ այդ ընկերության ներկայա- ցուցիչների միջև, եւ շուտով Վարդանի- ծորի տարածքում կառուցվելու է պոչամ- բար:**

– «Սազամար» ընկերության ներ- կայացուցիչների կողմից եղել է այդպի- սի առաջարկ, սակայն մերժել են, քանի որ իրենց ասած վայրում պոչամբարի առկայությունը կդառնար գյուղի ոչնչաց- ման պատճառ: Առաջարկել են այլ գյու- ղից բավականին հեռու մի վայրում կա- ռուցել, բայց դեռեւս պատասխան չկա:

– **Փաստորեն ձեր գյուղի տարած- քում Մեղրի գետի վրա, կառուցվելու է երեք հեկ, դա չի՞ վնասի Վարդանիծոր համայնքին, եւ արդյո՞ք գետի ջրային ռեսուրսները կբավականացնեն:**

– Հեկերը գործելու են 4-5 ամիս՝ գե- տի ջրառատ ամիսներին, իսկ մնացած ամիսներին դարձր են տալու, քանի որ ջուրը տեղի բնակիչներին հարկավոր է այգիներն ու բանջարանոցները ոռոգե- լու համար, իսկ Մեղրի գետի ջուրն ամ- ռան ամիսներին պակասում է: Բացի այդ, նաև պետք է պահպանվի գետի բնական հոսքը՝ այն 30%-ը, որ նախատեսված է օրենքով:

– **Ձեր գյուղի տարածքում գտնվում են եկեղեցիներ, պատմամշակութային հուշարձաններ, այդ թվում՝ Վանքի եւ Կալերի եկեղեցիները, Հիմ Թխկուտի եկեղեցին, Խալաթի հին գերեզմանոցը: Դո՞ւք եք իրականացնում դրանց հսկո- ղությունը, թե՞...**

– Դրանց հսկողությունն իրականաց- նում է հուշարձանների պահպանության Սյունիքի մարզային կառույցը, մենք էլ մեր հերթին փորձում ենք անել հնարա- վոր ամեն բան, որ եկեղեցիները կանգուն մնան: Որոշ եկեղեցիներ, գերեզմանոց- ներ, ցավոք, արդեն գտնվում են կիսա- վեր վիճակում, իսկ մի մասը ենթարկվել է զանձագողերի ոտնձգությունների:

– **Անցած տարվա հունիսի 5-ին փլվեց Երեւան-Մեղրի ավտոմայրուղու 365 կիլոմետրում գտնվող սարալանջը, որը գտնվում է Վարդանիծորի տարած- քում: Դրա հետեւանքով վնասվեց Վար- դանիծորի մայր առու, որը գետից ոռոգ- ման ջուր էր մատակարարում գյուղին: Այժմ ի՞նչ վիճակում է ջրատարը եւ ի՞նչ աշխատանքներ են տարվել մայր առուն վերականգնելու համար:**

– Այժմ, բարեբախտաբար, ոռոգման խնդիր չունենք, որովհետեւ ջրատարն

ամբողջությամբ վերականգնված է: Ան- ցած տարի տեղադրել էինք կիսախողո- վակներ, որոնցով բնակիչները ժամանա- կավոր ոռոգում էին իրենց տնամերձերն ու այգիները, սակայն քարաթափման հետեւանքով այն հաճախ էր վնասվում եւ փակվում: Այդ առումով, կարող են ասել, որ անցած տարին շատ դժվար էր գյուղացիների համար, քանի որ ոռոգ- ման ջրի խնդիր կար: Այս տարի 150 մետրանոց կիսախողովակը փոխել ենք փակ խողովակով, այնպես որ՝ ոռոգման հետ կապված խնդիրներն անցյալում են մնացել: Աշխատանքները կատարվել են մասամբ համայնքի բյուջեի, «Մեղրու ԵՇՀ» ՓԲ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանի եւ «ԶՊՄԿ» ՓԲԸ տնօրե- նի ընդհանուր հարցերով տեղակալ Ալիկ Դավթյանի աջակցությամբ:

– **Մենք գիտենք, որ Վարդանիծո- րում բնակարանային խնդիր կա, դրանք բնակիչներին չեն հերթում, ինչպե՞ս եք փորձում լուծել այդ խնդիրը:**

– Այո, այդ խնդիրը կա դեռ այն ժա- մանակահատվածից, երբ «Սիփան 1» ՄՊԸ-ն սկսեց ակտիվորեն գործել, շատ երիտա- սարդ ընտանիքներ կազմվեցին այստեղ, որոշ մասն էլ այլ բնակավայրերից եկավ, ու այստեղից առաջացավ բնակարան- ների պակասության խնդիրը: Այդ տարի- ներին գյուղում բնակչության աճ արձա- նագրվեց, որը շատ ողջունելի է: Կարելի է ասել, որ այն տասը երեխան, որ այս տարի պետք է հաճախեն գյուղի դպրոցի 1-ին դասարան, «Սիփան 1» ՄՊԸ-ի գոր- ծունեության շրջանում ստեղծված երի- տասարդ ընտանիքների զավակներն են: Այժմ հին դպրոցի շենքը տրված է ընտա- նիքներին, որոնք բնակարան չունենին, այդպիսով հինգ ընտանիքի համար հար- ցը լուծվեց: Փորձում են մնացածներին եւս հնարավորության սահմաններում օգնել:

– **Իսկ մրգի իրացման խնդիր գյուղա- ցին ունենո՞ւմ է:**

– Այդպիսի խնդիր չունենք գյու- ղում՝ շնորհիվ Մեղրու պահածոնե- րի գործարանի, որտեղ եւ գյուղացին հանձնում է հավաքած միրգը: Որոշակի դժվարություն կա խնձորի մթերման հարցում:

– **Իսկ ինչ այլ խնդիրներ կան այսօր գյուղում, որոնք առաջնահերթ լուծման կարիք ունեն:**

– Գյուղում միշտ էլ խնդիրներ լինում են: Փորձում ենք լուծումներ գտնել, եւ ստացվում է: Մինչ վերջերս Վարդանի- ծորում խնելու ջուր չկար, գյուղացիներն աղբյուրից էին ջուր վերցնում, իսկ այս տարի ներքին ցանցն ամբողջովին կա- ռուցվել է, մնում է գյուղի ցանցը միացնել Չվարից եկող ջրատարին: Այժմ գյուղում կա 25-30 մեկապարտեզ երեխա, իսկ մանկապարտեզը չի գործում, բյուջեում համապատասխան միջոցներ չկան ման- կապարտեզը պահելու համար: Գյուղա- միջյան ճանապարհները բարեկարգելու խնդիր կա նաև: Կա գյուղատնտեսական նշանակության շուրջ 400 հա հող, որն անմշակ է: Եվ այսպես շարունակ...

– **Հետաքրքիր է, մարդիկ հիմա՞ էլ իրենց փախստական են համարում, թե՞ 20 տարում ինտեգրվել են մեր հանրու- թյանը:**

– Ցավոք, 20 տարի հետո անգամ մարդիկ Վարդանիծորում իրենց փախ- տական են համարում: Այդ ընթացքում ծնվածներն են, որ իրենց ՀՀ քաղաքացի են համարում լիարժեք, չունեն լեզվա- մատչողության խնդիր: Այդ երեխաները նույնիսկ օգնում են իրենց ծնողներին սովորելու հայերեն գրերը, հայերեն կար- դալը:

Հարցազրույցը՝ ԱՂԱՎԻՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

## Բակային ճամբար Քաջարանում

ԱՄՍՈՒ - 2012

Հուլիսի 16-ին՝ վերջին 20- 25 տարուն առաջին անգամ, Քաջարանում բացվեց բա- կային ճամբար՝ երկու հեր- թափոխով: Նախածեռնողը Քաջարանի քաղաքապետա- րանն է, իսկ հովանավորը՝ «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն: Գամբարա- յին մեկ հերթը տեւելու է 12 օր: Առավոտյան ժամը 10-ից մինչեւ երեկոյան 6-ը երեխա- ներն անցկացնում են բակա- յին ճամբարում, երկու անգամ սնվում են, մասնակցում հե- տաքրքիր խաղերի, միջոցա- ռունների, մրցույթների: Առա- ջին հերթին մասնակցում է 120 երեխա՝ 8-12 տարեկան: Նա- խատեսվում է նաև կազմա- կերպել արշավներ՝ Սոսիների կտրակ, Վահանավանք: Երե- խաներն այցելելու են Ազա- րակ քաղաքի N գործմաս, որտեղ զինվորների համար համերգային ծրագիր են ներ- կայացնելու եւ մասնակցելու են հրաձգությանը: Բակային ճամբարներն այսօր շատե- ին են հիշեցնում խորհրդա-

յին ժամանակները, բայց եթե այն տարիներին երեխաների մեծամասնությունը հնարա- վորություն էր ունենում ճամ- բար հաճախել, ապա այսօր կան երեխաներ, ովքեր չեն ընդգրկվել առաջին փուլում: «Այն երեխաները, ովքեր չեն մասնակցել առաջին հերթին, անպայման հնարավորություն են ստանալու մասնակցել երկ- րորդին: Արդեն երկրորդ հեր- թի համար 30 դիմում-հայտ ունենք», – ասում է Քաջա- րանի քաղաքապետարանի սպորտի, մշակույթի եւ կրթու- թյան բաժնի վարիչ Գայանե Համազասպյանը: Բակային ճամբարը կարելու է երեխա- ների համար, քանի որ շատե- ռի ծնողները չունեն համա- պատասխան ֆինանսական հնարավորություն՝ իրենց երե- խաներին այլ հանգստի գոտի- ներ ուղարկելու համար:

Հուլիսից, որ բակային ճամբարը ճանաչողական եւ դաստիարակչական կարելու նշանակություն կունենա ճամբարականների կյանքում, ամեն մի ճամբարային օր խոր հետք կթողնի քաջարանցի երեխաների հոգում, եւ նրանք անհամբեր կսպասեն հաջորդ ամառվան:

ԶԱՐԻՆԵ ՀԱՍԱՐԱԶՈՒՄՅԱՆ

## Թափուր Կրեդերը քրոնիկ բնույթ են կրում

ԲՈՒՀ

Ընդունելության քննու- թյունների թոհուբոհը մնաց հետեւում: Արդեն հայտնի է, թե ովքեր ուսանող դառնալու իրավունք ստացան: «Այու- նյաց երկրին» հետաքրքրում էր, թե մարզի բուհերի առա- ջին կուրսերը որքանով են հա- մարված ուսանողական կենտրոն- ներում: Հիմա Կապանի մասնաճյուղի տնօրեն Լեռնիկ հայտնեց, որ նախատեսված 110 տեղի փոխարեն բուհ է ընդունվել 56 դիմորդ: Ամենա- շատ ուսանող՝ 23 հոգի (որից երկուսը՝ անվճար) ընդունվել է լեռնահանքային ճյուղում ձեռնարկությունների տնտե- սագիտության ու կառավար- նությանը կից 16 հոգի (երեք անվճար տեղ): Պակաս նվազ չափով են համարված «Մետալուրգիա եւ նյութագի- տություն» (ութ ուսանող, չորս- քուր պետպատվերով), «Շինա- րարություն», շինարարական «Մետալուրգիա եւ նյութագի- տություն» (հինգ հոգի, երեքը պետպատվերով), «Օգ- րարական հանձնողների հետա- գոտում եւ մշակում» (չորս հո- գի, երեքը պետպատվերով):

Գործի պետական համալ- սարանում թափուր է մնացել 99 տեղ, նախատեսված 237 տեղի փոխարեն բուհ է ընդուն- վել 138 դիմորդ: Առավել ապա- հովված են բանասիրական եւ տարրական կրթության եւ մե- թոդիկա ֆակուլտետները, իսկ տեխնիկական առարկաների նկատմամբ հետաքրքրության նվազում է նկատվում: Ինչպես փոխանցեց համալսարանի ղեկավար Յուրի Սաֆարյանը, վիճակը որոշակի կարող է շտկվել երկրորդ հայտ լրաց-

րած ուսանողների հաշվին: Փորձեցինք նաև տեղե- կություններ քաղել մարզի մյուս բուհերի՝ առաջին կուր- սեցիներով համարվածու- թյան աստիճանի վերաբերյալ: Երեւանի գյուղատնտեսա- կան համալսարանի Կապա- նի ուսումնական կենտրոնի տնօրեն Նարինե Մովսիսյանը հայտնեց, որ նոր ուստարում կունենան 35 ուսանող, իսկ հե- ռակ ուսուցման համար ըն- դրակությունը շարունակվում է: Գյուղատնտեսական համալ- սարանի Սիսիանի մասնաճյու- ղի տնօրեն Արթուր Կոստան- դյանի տեղեկացմամբ՝ իրենց կործակված ուսուցումը տար- վում է հեռակա կարգով, եւ ընդունելությունը կլինի հոկ- տեմբեր ամսին: Ինչպես տեղե- կացանք մասնակց, գյուղատն- տեսական համալսարանում բավականին թափուր տեղեր կան, եւ այդ բուհ կընդունվեն բոլոր այն դիմորդները, ովքեր դրական միավոր են ստացել:

«Այունիք» ինստիտու- տի տնօրեն Գրավիկ Բաբա- յանը հայտնեց, որ այս պահի դրությամբ առաջին կուրս ընդունված ուսանող չունեն, միջնակարգ մասնագիտա- կան ուսումնական հաստա- տություններն ավարտածները համարում են երկրորդ կուր- սը: Ի դեպ, նշեց, որ այս ըն- դունելության քննությունների ժամանակ բոլոր բուհերի հա- մար գործում էր միասնական քննակարգը:

Կապանում է գործում ռուս- հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Կապանի մասնաճյուղը, որի տնօրեն Վիկտորյա Դավթյանի հավաստմամբ իրենց կրթու- թյունների միասնական հա- մակարգի հետ կապ չունի, դրանից գատ ընդունելության քննությունները մասնաճյու- ղում անցկացվում են օգոս- տոսի 25-ից հետո: Այս պահի դրությամբ մասնաճյուղ է դի- մել վեց հոգի:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ







## ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԻԻ ԶՈՐՈՒՄ

# ՄԱՋԻԿԱՆՆԵՆ ՏԵՄԻԼ. պղծվում է Կապանի խմելու ջուրը

Սկզբը՝ էջ 7

Ղի գետի համեմատաբար ստորին հոսանքում (Աջաբաջից ներքեւ) կառուցված է եղել պարզունակ մի ջրընդունիչ եւս, որը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի Հարավային մասնաճյուղի Կապանի տեղամասի նախածեռնութեամբ արդարացիորեն փակվել է: Դա այն վայրում էր, որտեղ Գեղին մաքուր պահելու հավանականությունը նվազում է, ուստի եւ չէր կարելի այդ ջրընդունիչով ջուր մտցնել ջրատար: «Հայջրմուղկոյուղու» աշխատակիցը մեզ պատմեց, որ սակավաջուր ամիսներին քանիցս «Լեռ-էքս Էներգիա» ՍՊԸ-ի աշխատակիցները կամայականորեն բացել են այդ ջրընդունիչի խողովակը՝ հէկերի գործունեությունն ապահովելու նպատակով, ինչն անդրադարձել է խմելու ջրի որակի վրա:

Աջաբաջի ջրընդունիչի տարածքը ցամաքապատված է, կա նաեւ շուրջօրյա պահակակետ: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն, սակայն, նույն հոգատարությամբ չի վերաբերվում Գարթի ջրընդունիչին: Սանիտարական գոտի կոչվածը թվացյալ է այդտեղ, պահակային ծառայություն չկա, եւ մարդկանց, անգամ անասունների ելունուտը խոչընդոտող հանգամանքներ նույնպես չկան: Գարթի ջրընդունիչի պահպանության իրական գոտու ստեղծումը, կարծում ենք, «Հայջրմուղկոյուղու» առաջնահերթ խնդիրներից պետք է լինի:

Իսկ թե Բարգուշատի լեռներից հոսող սառնորակ ջրերն ինչպիսի որակով են հասնում Կապան՝ դա արդեն կարող են իրենք՝ Կապանի բնակիչներն ասել:

### Ի՞նչ է կարարվում ջրի հետ՝ հէկերն աշխատեցնելուց հետո

Գեղիի ձոր այցելելու առիթը խմբագրությունն դիմած մի խումբ կապանցիների մտահոգությունն էր՝ Գեղիի ջրատարի վրա կառուցված հիդրոէլեկտրակայաններից բխող հնարավոր վտանգի կապակցությամբ: Մարդիկ անհանգստացած են, որ խմելու ջուրը հիդրոէլեկտրակայաններն աշխատեցնելուց հետո փոփոխության է ենթարկվում, ինչն էլ անդրադարձ է ունենում իրենց առողջության վրա:


Գեղիից եկող խմելու ջրատարի վրա, իրոք, 2004 թվականից գործում է չորս հիդրոէլեկտրակայան: Դրանք Կապանի շրջանի նախկին ղեկավար Ռուհուր Դոնյանի ընտանիքին պատկանող «Լեռ-էքս Էներգիա» ՍՊԸ-ի հէկերն են: Լրագրողներս առաջին անգամ էինք տեսնում, որ Կապանի խմելու ջրատարի վրա հէկեր են դրված, մինչ այդ լսել, բայց չէինք հավատացել, որ կապանցիներն այն էլ հիդրոսարքավորումներ աշխատեցրած ջուր: Իրողությունը ոչ սովորական է, իսկ Սյունիքի մարզում՝ բացառիկ: Առավել զարմանալի էր հանգամանքը, որ դրա հեղինակը Ռուհուր Դոնյանն է՝ 1980-88թթ. Կապանի կուսըջկոմի առաջին քարտուղարը, տարիներ շարունակ Կապանն առաջնորդած անձնավորությունը: Հարցի բարոյական աստաղը, սակայն, թողնենք մի կողմ, մանավանդ որ դա ոչ մեկին հիմա հետաքրքիր չէ: Հարցի ֆինանսա-

կան կողմն էլ դժվար թե ընթերցողին հետաքրքիր. մարդն ավելորդ ծախսերից խուսափել է եւ իր համար նոր ջրատար չի կառուցել, մարդը կարողացել է թույլտվություն է վերցրել՝ իր երազած հէկերը Կապանի խմելու ջրատարի վրա կառուցելու համար: Հաջողել է նաեւ ջրատարի օգտագործման համար «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ հարաբերությունները պարզել տարեկան 1 մլն դրամ վարձավճարով: Հետաքրքիր չէ նաեւ, թե ինչպես է ջարդել մեր երկրին բնորոշ գերատեսչական գոց դռները եւ անհրաժեշտ լիցենզիաներ ձեռք բերել: Հետաքրքիր չէ նաեւ, թե ինչպես է վաստակել օրվա իշխանությունների լոյսալությունը:

Հետաքրքիրն ու մտահոգիչն այլ հարթության վրա են՝ արդյո՞ք այդ ամենից հետո ջուրը որակական փոփոխության է ենթարկվում, արդյո՞ք փոփոխությունն (թե՞ տեղ է գտնում) անդրադառնում է մարդկանց առողջության վրա:

Հարցերի պատասխանն իմանալու համար դիմեցինք բնագավառի բազմաթիվ մասնագետների (ջրաբաններ, փորձագետներ, տեխնոլոգներ, քիմիկոսներ, կենսաբաններ): Որքան էլ զարմանալի է՝ խնդրող առարկայի վերաբերյալ նրանց կարծիքները չէին համընկնում միմյանց: Տեխնիկական գիտությունների թեկնածու, ջրաբան Բնարիկ Հովհաննիսյանը, օրինակ, ասաց. «Նախեստառջ սխալ են արել, որ խմելու ջրատարի վրա հէկ են դրել: Արդյունքում՝ ջրի ջերմաստիճանն է ամեն հէկ աշխատեցնելով մինչեւ 3-4 աստիճան բարձրանում, որն առաջ է բերում ջերմային աղտոտվածություն, չեն բացառվում նաեւ յուղային հոսքերը: Այդուհանդերձ՝ քիմիական կազմի փոփոխություն տեղի չի ունենում: Միսիթարական է այն, որ այդ հէկերն աշխատեցնելուց հետո ջուրը մտնում է մաքրման կայան»:

Ջրուցակիցս հավելեց նաեւ, որ հիդրոէլեկտրակայաններն էկոլոգիապես անվտանգ կառուցվածք են եւ առկա մտավախությունները կարելի է տեսականորեն հերքել: Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռազմիկ Վարդանյանը կարծում է միևնույն, որ ջրի կառուցվածքը մինչեւ վերջ հասկանալի չէ եւ չի կարելի նման նուրբ եւ պատասխանատու հարցերում տեսական բնույթի եզրակացություններ անել: Ըստ Ռազմիկ Վարդանյանի, միայն լուրջ փորձաքննությունից, լաբորատոր հետազոտությունից հետո կարելի է ճշմարիտ բացատրություն տալ խնդրող առարկայի վերաբերյալ: Հայաստանի կանաչների միության նախագահ Հակոբ Սանասարյանը, հիմք ընդունելով միկրոկենսաբանների կարծիքը, կարծում է, որ հէկերն աշխատեցնելուց, ջերմային աղտոտվածության ենթարկվելուց հետո ջրի կենսաբանական



Գեղի-Կապան ջրատարի (խմելու) վրա կառուցված հէկերից մեկը:

բաղադրությունն է փոխվում: Իրարմերծ կարծիքներ լսեցինք նաեւ ջրի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ: Որոշ մասնագետներ անխուսափելի են համարում ջրի մեջ գտնվող այլ նյութերի (ոչ թե ջրի) իոնացումը: Կյուրատմետական ակադեմիայի պրոֆեսոր (կենսաբանական գիտությունների դոկտոր) Ռոման Բամալյանը նույնպես չի հերքում եւ չի հաստատում ջրածնի պերօքսիդի առաջացման հավանականությունը: Կարծիքների նման բազմազանությունը ցույց է տալիս, որ հարցն իսկապես նուրբ է եւ լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Ուրեմնեւ, օգտվելով առիթից՝ կոչ ենք անում հանրապետության ջրաբան-փորձագետներին՝ իրենց խոսքն ասել այդ հարցում՝ նկատի ունենալով, որ խոսքը մի ամբողջ քաղաքի ջրամատակարարման մասին է:

Կա եւս մեկ հարց, որ բխում է խնդրող առարկայից՝ ի՞նչ դեր կարող է խաղալ Կավճուտի մաքրման կայանը՝ ջրի նախնական որակը վերականգնելու հարցում. այն աշխատում է մեխանիկական մաքրման եղանակով (ավազի ֆիլտր՝ վեց շերտից) եւ հիմնականում վերացնում է ջրի աղտոտվածությունը, հեղուկ քլորով վարակազերծում ջուրը:

Քննարկվող հարցի առնչությամբ իր կարծիքն արտահայտեց ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության Սյունիքի մարզային կառույցի պետ Լենա Մալինցյանը՝ «Եթե կան լիցենզիաներ, ապա մենք անելիք չունենք: Իսկ առհասարակ խմելու ջրատարը պետք է գերծ լինի ամեն

ինչից: Ցավոք «Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի մանրէաբանական եւ սանիտարաքիմիական լաբորատորիան չի կարող պատասխանել մտահոգող հարցին, ուստի եւ ձեռնպահ են մնում գնահատականներ տալուց: Խնդիրն ավելի շատ պետք է բնապահպաններին մտահոգի»:

### Գեղիի եւ Նոր Աստղաբերդի գյուղապետերի դերակատարությունն այս մեծ խաղերում

Գեղիի ձորում տեղի ունեցող ամեն ինչ, որքան էլ մեծահամբավ մարդկանց ու պաշտոնյաների անուններ շրջանառվեն, գլուխ է բերվում երկու այդ համայնքի ղեկավարի ձեռքը: Չէ, դա նրանց գորավորությամբ չէ պայմանավորված: Դա «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով է պայմանավորված, համայնքի ղեկավարին այլ օրենքներով եւս վերապահված իրավունքներով ու պարտականություններով է պայմանավորված: Եվ քանի որ այդ ենթաշրջանում իրագործվել ու իրագործվում են, ծրագրվել ու ծրագրվում են հավակնոտ, շատ հաճախ մեծ ռիսկեր պարունակող ծրագրեր, ուստի եւ այդ գյուղապետերի վարքի դիտարկումը դառնում է օրախնդիր, որքան էլ բեմի հետմամասում բոլորովին այլ մարդիկ են կանգնած:

Գեղիի համայնքը ղեկավարում է Վասիլ Գրիգորյանը (գյուղապետ է ընտրվել երկու անգամ, ունի միջնակարգ կրթություն): Նոր Աստղաբերդի համայնքը

ղեկավարում է Սուրիկ Թեւանյանը (գյուղապետ է ընտրվել չորս անգամ, ունի միջին մասնագիտական կրթություն):

Երկու համայնքում էլ առաջիկա սեպտեմբերի 9-ին տեղի կունենան համայնքի ղեկավարի ընտրություններ: Երկու համայնքապետն էլ ՀՀ անդամ են:

Առաջին հայացքից ոչինչ չասող այդ տվյալները վկայում են, որ նրանք ինքնուրույն գործելու, սեփական հայեցողությամբ որոշումներ ընդունելու քիչ ռեսուրս ունեն: Վասիլ Գրիգորյանը, օրինակ, համառորեն խուսափեց լրագրողներին հետ հանդիպելուց, թեւ պայմանավորվել էինք երկու օր առաջ, թեւ նույն օրը եւս հիշեցրինք մեր պայմանավորվածության մասին: Դե մարդուն հասկանալ կարելի է կամ սեփական ինտելեկտից է փախչում եւ չի ուզում լրագրողների հետ շփվել, կամ էլ վախենում է առաջին գծում երեւալ, ինչը կարող է եւ թանկ նստել իր աթոռի վրա...

Գեղիի ձորում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների հետ (այդ թվում՝ «ԲԱՍՕ Սետալ», «Եվրոէներգո հոլդինգ» եւ «Եաէներգո-փստենա» ընկերություններ) հողի վարձակալության պայմանագրեր կնքող երկու գյուղապետն են: Ուստի եւ հարց է ծագում՝ ինչո՞վ են առաջնորդվել եւ առաջնորդվում գյուղապետերը, երբ մշված եւ մյուս ընկերությունների հետ հողային պայմանագիր են կնքում. սովորական մերկանտիլիզմ, համայնքի շահերից բխող քա՞յլ, թե՞ գոհողություն վերադաս մարմիններին...

Նոր Աստղաբերդի համայնքի ղեկավար Սուրիկ Թեւանյանը











# Գրկում եմ քեզ, քո...

## ՅԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

**Ամեն գյուղական համայնք իր անվանի գավառների անտես կաճառի ուրվապարկերն ունի, եւ այդ ընկալումը, ինչ խոսք, անհաս է քաղաքաբնակին:**

Գյուղի մշտական գրուցատեղում գլուխ-գլխի տված ծերակույտը եւ դարոցն՝ իր հերթին, մանչերին ու պարմաններին հպարտություն են ներշնչում՝ մատնացույց անելով գյուղի պատմության հուղվույթի պայծառ անհատականություններին, որոնց գործունեությունը համայնքի ճանաչելիության առիավատյան է: Նրանք գյուղի երկնակամարում, համայնքի ավանդույթներով փառավորվողի համար, պատկերանում են որպես յուրովի բոցավառության ու փայլի ասուպներ... Հայրենի հողի համար մարտերում ընկած մեր նախնիների, պետական գործիչ Կ.Գեորգյանի, գիտության վաստակավոր գործիչ Թ.Հակոբյանի, գրող Ս.Ունայանի լեռնածորյան պանթեոնում հանգրվանել է 64-ամյա Յուզիկ Լեւոնի Համբարձումյանը: Հիվանդության անբուժելիությամբ տակավին համամարդկային տկարություն ու նահանջ է բայց Յուզիկի թողած թերին անգիտելի ու անկառնելի չէ...



Բաքվի գվարդիական այր, հայր Լեւոնը, ում իմաստախոսությունները ցայժմ շրջանառվում են որպես առած ու ասացվածք, մանկանց ամուռ ղեմելիս, ժամանակի հովերով տարված, ակնկալիք ուներ: Հայտնի ֆիզիկոս եւ գյուտարար Յուզի անուրը, թերեւս կկողմնորոշեր որոշակի ասպարհ: Կարծես, եղավ...  
Դեռ պատանեկության տարիքում գյուտերին տածած սիրահարվածությամբ, հայրական տան

գրադարանի ընդլայնման մտահոգությամբ, ռոմանտիկ նախածեռնությունների ձեռնարկմամբ Յուզիկը տարեկիցների շրջանում լիդերի համարում ուներ: Լեռնածորի յոթնամյակում, Քաջարանի միջնակարգում սովորելիս ֆիզիկամաթեմատիկականի քանքարով լիացրել-հիացրել էր ուսուցիչներին: Մանկավարժագիտության կողմից դեռեւս չկարեւորված մի օրինաչափությամբ, շնորհների բնատուր պարգև (բարբառիս դիպուկ բառով՝ սովորի) ունեցող սովորողի բարքը խթանում է աշակերտական համրույթի ուսումնաստեղությունը: Յուզիկն ու համադասարանցի Գագիկն ավարտական դասարանում բարեկամացել են Պ.Սեւակի հետ, մտերմի նամակագրություն ունեցել: Հետագայում Յուզիկն իր որդուն Պարույր անվանակոչեց, Գագիկ՝ Դավթյանը՝ շարունակեց բանաստեղծին...  
Գիտության ճանապարհն անշեղ ուղեմիջ էր խորհրդային դարի սահմանագծին անհրաժեշտ շրջադարձ

կատարած երիտասարդի համար: Ավարտելով Երեւանի պոլիտեխնիկականի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ զուգահեռված մայրիկ կոչմամբ, 1970-91թթ. աշխատել է մոսկովյան ծովային գիտահետազոտական ինստիտուտի Երեւանի մասնաճյուղում, ապա՝ ՀԽՍՀ ԳԱ Կապանի մասնաճյուղում՝ ավագ գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ, փորձարարական գործարանի տնօրեն: Աշխատանքին զուգահեռ բազմակի անգամ գիտական հոդվածներ է տպագրել հայրենական ու արտերկրի պարբերականներում, 1981թ. պաշտպանել է գիտական թեզ, ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հեղինակ է հանքարդյունաբերության բնագավառի՝ գրանցված չորս գյուտի:

Ինչպես հայրենի գյուղում միտուկաց ուներ ամեն ընտանիքի հետ եւ Կապանում քաղցրալուր էր բոլոր ճանաչողներին, այդպես խորահագուրդ հարաբերվում էր գիտական շրջանակների, հետազոտողների հետ, քաջալերվում մոսկովյան, եվրոպական գործակիցներից ու յուրովյան քաջալերում նրանց:

Հայրենիքի անվտանգության մտահոգությունը, էն գլխից, նախ ուսյալի առաջնահերթությունն է: Եվ արցախյան լարվածության ուժգնացման շրջանում Համբարձումյանը բացահայտեց կազմակերպչի իր շնորհները: 1991-96թթ. լինելով Կապանի շրջխորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալ, իր անտես եւ տեսանելի ներդրումն է ունեցել շրջանի պաշտպանության ծանրածանր աշխատանքներում: Կապանյան առաջին իշխանության նախագահները պատվով քննություն բռնեցին. թեպետ եղան անլույս տարիներ, չեղան բռնություն եւ սովախարություն, ոգեկոչվեց քաղաքացիական համերաշխությունը, վերականգնվեցին կորուսյալ հայեցի տեղանունները...

Իշխանության բուրգում անհատի

վաղվա օրը համեմատական է եղանակից կախված գյուղատնտեսական բերքի հաջողությանը: Արդ, խոստումնաշատ գիտնականին մնում էր «դարձի գալ» եւ անցնել գիտամանկավարժական աշխատանքի. պաշտոնավարեց «Արդիմպեքսում», եղավ ՀԴՃՀ Կապանի կրթահամալիրի կառավարման ավտոմատացված համակարգերի ամբիոնի դասախոս, դոցենտ, ամբիոնի վարիչ: Համբարձումյանի օժտվածությունների ընդգծելին արդիականությունն էր, անցյալի արժեքների գնահատմամբ՝ նորի շուտափույթ ընկալումը. ձեռք գարկեց գործարարությանը՝ կազմակերպեց «Նասիբենց» ՍՊԸ-ն, համագործակցեց «Լամաքս գրուպի» հետ՝ պարսիկ բարեկամների բազումից նախագանցել հանդիսանալով:

Հայրենի եզերքը չեն ու բարեկեցիկ դարձնելու, մշակույթն ու կրթությունն ուժերի ներածին չափ խթանելու հոգեւոր բարեմասնություններով ու ներդրումներով մշտական տեղ գրավեց ժամանակի հարահոսի վրա: Հայրենի գյուղի բարեկարգումների ցանկում նաեւ նրա ոսկետառ անունն է: Երբեւ գրել էր գյուղի աշակերտներին. «Տառապում եմ մշտական լավատեսությամբ՝ համոզված, որ մեր հայրենիքի լավագույն օրերը հեռու չեն: Այսօրվա սերնդին ցանկանում եմ արժանապատիվ կեցվածք, ապահով կյանք, իմաստալից ժամանց...»: Հիանալի հռետոր էր՝ մեջբերումների իմաստուն խոսք ու խրատով: Իր մեծածավալ գրադարանի գիտատեխնիկական բաժնեմասը նվիրաբերել է հայրենի գյուղի դպրոցին, որտեղ կենտրոնացված են նրա դիվանից մասունքներ: Եվ, անշուշտ, հավերժությանն է միտված Պարույր Սեւակի՝ Յուզիկին գրած մի նամակը, որ բանաստեղծն ավարտել է ստորագրությամբ՝ գրկում եմ քեզ, քո ...

**ՈՐԲԵՐՑ ԳՐԻՊՈՐԶԱՆ (ԷԶԱՆԱՏԻ)**

# Երկուսը փուն դարձան մրցանակով

## ՄԱՐԶԱԿԱՆ

Երեւանում հունիսի 18-20-ն անցկացվեց գեղարվեստական մարմնամարզության օլիմպիական մարզադպրոցի բաց առաջնությունը, որին մասնակցեց մոտ 100 մարզուհի: Նրանցից չորսը ներկայացնում էր Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցը՝ Մարիամ Անդրեասյան, Աննա Հովսեփյան, Նանե Գրիգորյան, Մարի Կարապետյան (մարզիչներ՝ Ինգա Փարսադանյան, Լիլիթ Աբգարյան): Մարիամ Անդրեասյանը 2001թ. ծնվածների մեջ կանգնեց պատվո պատվանդանի ամենավերին հարթակին եւ պարզեատարվեց ոսկե մեդալով, իսկ Աննա Հովսեփյանը գրավեց երրորդ մրցանակային տեղը՝ պարզեատարվելով բրոնզե մեդալով: Այս ամենի մասին խմբագրությանը տեղեկացրին մարզուհիների մարզիչները եւ խնդրեցին թերթի միջոցով իրենց շնորհակալությունը փոխանցել Աժ պատգամավոր Վահե Հակոբյանին, Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանին, մարզադպրոցի տնօրեն Մերուժան Աբայանին, որոնց



հովանավորության եւ աջակցության շնորհիվ հնարավոր եղավ մասնակցել առաջնությանը: Նրանք հայտնեցին, որ հրավերներ են լինում տարբեր մրցումների մասնակցելու, սակայն հիմնական հովանավոր չունենալու պատճառով գրկվում են այդ հնարավորությունից: Դրանից զատ՝

մարզվելու պայմանները հեռու են բավարար լինելուց: Մարզադպրոցի չի չափերով փոքր է, ծնանը չի ջեռուցվում: Եվ այդքանից հետո հանրապետական մրցումներում մեղավոր նվաճելը մեծ հաջողություն կարելի է համարել:  
**ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆԱՆ**

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆԵ** ՀԴՃՀ (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղի կոլեկտիվը շնորհավորում է Լեւոնիկ Պետրոսյանին՝ ՀՀ ԲՈՂԻ կողմից պրոֆեսորի գիտական կոչումը հաստատելու կապակցությամբ եւ մարդուն նորանոր հաջողություններ կրթության եւ գիտության բնագավառում:  
**ՀԴՃՀ Կապանի մասնաճյուղի կոլեկտիվ**

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆԵ** ՀԴՃՀ (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղի կոլեկտիվը շնորհավորում է Արթուր Սարգսյանին՝ ՀՀ ԲՈՂԻ կողմից դոցենտի գիտական կոչումը հաստատելու կապակցությամբ եւ մարդուն նորանոր հաջողություններ կրթության եւ գիտության բնագավառում:  
**ՀԴՃՀ Կապանի մասնաճյուղի կոլեկտիվ**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«Ազարակի միջնակարգ դպրոց» ՊՈՒԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:**  
Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթի պայմաններն են՝  
1. ՀՀ քաղաքացիությունը,  
2. բարձրագույն կրթություն  
3. ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):  
**Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝**  
1. դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,  
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,  
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,  
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),  
5. հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչում հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),  
6. աշխատանքային գրքույկի պատճենը:  
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:  
Փաստաթղթերը ընդունվում են 2012թ. հունիսի 17-ից մինչեւ օգոստոսի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-15.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:  
Մրցույթը տեղի կունենա 2012թ. օգոստոսի 20-ին ժամը 12.00-ին, Ազարակի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Սյունիքի մարզ, ք. Ազարակ, Չարենցի 21/1:  
Տեղեկությունների համար զանգահարել (0286) 2 18 50 հեռախոսահամարով:  
**ՊՈՒԿ-ի կառավարման խորհուրդ**

**Սյունյաց երկիր**  
S U N I A C Y E R K I R  
Գլխավոր համագիր՝  
**ՍՍՍՎԵԼ ԱԼԵՅԱՆՅԱՆ**  
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:  
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհանրակցել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):  
**«ԳՈՎԱԶԳՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ»** բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է:  
Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:  
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:  
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 19.07.2012թ.:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Գործիսի պետական քոլեջում նաեւ արհեստագործական ուսուցում

Հարցազրույց Գործիսի պետական քոլեջի տնօրեն, Գործիսի ավագանու անդամ Կարեն Լազարյանի հետ

– Պարոն Լազարյան, «Այունյաց երկիրը» առաջին անգամ է Ձեզ հետ զրուցում: Եվ կուզենայինք, ճիշտն ասած, խոսել երկու թեմայի՝ Գործիսի ավագանու գործունեության եւ Գործիսի պետական քոլեջի ներկա կացության շուրջ: Սակայն դրանք, կարելի է ասել, միմյանց հետ ուղղակի կապ չունենցող ոլորտներ են եւ տարողունակ են՝ առանձին-առանձին, ուստի երբեք չենք տարանջատել հարցերը՝ ավագանու մասին քննարկումը թողնելով ավելի ուշ ժամանակի: Ուրեմն՝ կենտրոնանա՞նք քոլեջի վրա:

– Խնդրեմ:

– Ձեր կենսագրականը սույն հարցազրույցի մեջ համառոտ ներկայացնում ենք ընթերցողին: Եվ դրանից, ըստ էության, ծնվում է առաջին հարցը: Վեց տարվա մանկավարժական աշխատանքի կենսագրությանը, կառավարման ոլորտում փորձ չունենալով՝ 2009թ. ընտրվեցիք Գործիսի կրթական հաստատության տնօրենի պաշտոնի ստանձնումը:

– Իհարկե դժվար էր, կար մտավախություն, կար բնական լարվածություն, կար պատասխանատվության զգացում, կար գիտակցում, թե ինչ խաչ պիտի կրեմ: Ինչպես գործընկերներս են ասում, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հունի մեջ ընկա: Կոլեկտիվի անդամներին գիտեի, կրթօջախի խնդիրներին ու առաքելությանը քաջատեղյակ էի: Կոլեկտիվը մեծ դեր խաղաց, մարդիկ անկեղծորեն հավատացին ու նեցուկ եղան: Ինձ աջակցեց կրթության եւ գիտության նախարարության միջին մասնագիտական կրթության բաժինը: Ինձ ոգեւորեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի, ինչպես եւ քոլեջի կառավարման խորհրդի վստահությունը: Այդ բոլորով հանդերձ՝ հեռու եմ մտայնությունից, որ կատարյալ, անթերի, անսխալ տնօրեն է լինում, այն էլ՝ կրթության ոլորտում, որ արժանատի վերափոխությունների շրջան է ապրում: Պահանջվում են մշտական աշխատանք, որոնումներ, իմացության սահմանների անընդհատ ընդլայնում, կառավարման կատարելագործում. այլապես եւ ինքը հետ կմնաս, եւ քո ղեկավարած հաստատությունը չի դիմանա կրթության բնագավառում ներկայումս իշխող մրցակցային մթնոլորտին:

– Դուք նշեցիք կրթության բնագավառում տիրող մրցակցային մթնոլորտի մասին: Դա, իսկապես, առկա է ոչ միայն մայրաքաղաքում, այլեւ շրջաններում, այդ թվում՝ Գործիսում: Արդյո՞ք Գործիսի պետական քոլեջը դիմանում է այդ մրցակցությանը:

– Անշուշտ, դա մեր օրերի լրջագույն մարտահրավերներից է: Երբ 1928թ. ստեղծվեց կրթօջախը (սկզբնական շրջանում՝ Գործիսի մանկավարժական տեխնիկում)՝ ոչ միայն Գործիսում, այլեւ Սյունիքի, Վայոց ձորի մարզերն ընդգրկող



ՏՆՈՒՄՆԵՐ  
Կարեն Լազարյան. ծնվել է 1979թ. նոյեմբերի 7-ին Գործիսում: Քաղաքի N3 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1996թ. ընդունվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը, որն ավարտել է 2000 թվականին՝ ստանալով ֆիզիկական կուլտուրայի դասատուի եւ արվեստի մարզչի որակավորում: Այնուհետեւ գորակազմել է բանակ եւ 2000-2002թթ. ծառայել Արմավիրում, Վայքում ու Խաչիկում: Ձորացրվելուց մեկ տարի անց, իբրեւ ֆիզկուլտուրայի դասախոս, աշխատանքի է անցել «Գործիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում (նախկինում՝ Գործիսի մանկավարժական ուսումնարան): 2009թ. ընտրվել է նույն քոլեջի տնօրեն: 2008թ. ընտրվել է Գործիսի ավագանու անդամ: Ամուսնացած է, ունի երկու դուստր: Անկուսակցական է:



նախկին շրջաններում, Լեռնային Ղարաբաղում չկար բուհական եւ միջին մասնագիտական որեւէ այլ հաստատություն (բացի Գործիսի գյուղատեխնիկումից): Գործիսը յուրօրինակ կրթական կենտրոն էր Հայաստանի հարավ-արեւելյան տարածաշրջանի եւ Լեռնային Ղարաբաղի համար: Այն ժամանակ (եւ այդպես՝ տասնամյակներ շարունակ) Գործիսի մանկավարժական տեխնիկումը (հետագայում՝ մանկավարժական ուսումնարան) բավարարում էր կրթության, նաեւ կառավարման ոլորտի կադրային պահանջը: Տարիների ընթացքում այդ իրավիճակն աստիճանաբար փոխվեց: Այսօր միայն Գործիսում կա պետական համալսարան՝ բազմաթիվ ֆակուլտետներով՝ առկա է ոչ առկա ուսուցմամբ, «Սյունիք» ինստիտուտը, Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը, «Հայաստանում Եվրոպական քոլեջ» հիմնադրամի մասնաճյուղը: Կրթօջախների մեծ խիտ ցանց կա

Լեռնային Ղարաբաղում, Կապանում, մի քիչ պակաս՝ Սիսիանում, նաեւ Սեղրիում: Եվ, բնականաբար, յուրաքանչյուր կրթօջախի, ամեն մի մասնագիտության հանդեպ կա որոշակի հետաքրքրություն: Ահա այս պայմաններում էլ պիտի կարողանալ ավազակալել քոլեջի մրցունակությունը:

– Եվ ո՞րն է, ըստ Ձեզ, մրցունակ լինելու գլխավոր չափանիշը:

– Մրցունակ լինելու, մրցակցելու մեկ հիմնական չափանիշ կարող է լինել՝ դա կրթության, ուսուցման որակն է, քոլեջի՝ գիտելիք տալու, գործնական հմտություններ ձեւավորելու կարողությունը՝ դրանցից բխող բոլոր պահանջներով: Մենք այդ սկզբունքով ենք առաջնորդվում: Իսկ ավելի անկեղծ՝ Գործիսի պետական քոլեջը տարածաշրջանում միայն մեկ մրցակից ունի. դա Գործիսի պետական համալսարանն է:

– Մրցակցությանը դիմա՞նալու չափանիշներից մեկը, կարծում եմք,

ընդունելության ցուցանիշներն են: Եվ ուրեմն՝ քանի՞ դիմորդ է ունեցել քոլեջը 2009 թվականից մինչեւ հիմա՝ ըստ տարիների:

– 2009 թվականին՝ 122, 2010-ին՝ 113, 2011-ին՝ 71 (պետք է նկատի ունենալ, որ 2011թ. հանրակրթական դպրոցը շրջանավարտ չտվեց): Այս տարվա արդյունքների մասին դեռ վաղ է խոսել: Մի բան կարող եմ ասել՝ ներկայիս ընդունելությանը շատ լուրջ ենք պատրաստվել: Հատկացվել է 240 տեղ, որից 86-ը՝ անվճար հիմունքով: Ի դեպ, վերջին 20 տարում մեր քոլեջին երբեք այդքան անվճար տեղ չէր հատկացվել (մեկ ուսումնական տարվա համար): Ավելին՝ այդ թիվը կարող է եւ աճել՝ կախված հանգամանքից, թե արտոնություններով (օրենքով սահմանված) քանի դիմորդ կունենանք: Ինչու՞ եմ ոգեւորվում արձանագրում անվճար տեղերի ավելացման փաստը: Նախ՝ դա հնարավորություն կտա սոցիալապես անապահով խավերից ավելի շատ երեխաներ ընդգրկել մասնագիտական կրթության համակարգ: Երկրորդ՝ դա հավելյալ կայունություն կհաղորդի քոլեջի ֆինանսատնտեսական գործունեությանը:

– Սակայն, որքանով տեղյակ ենք, քննարկվող ժամանակաշրջանում նաեւ մաղումներ եք ունեցել: Ինչպե՞ս եք դա բացատրում:

– 2009 թվականին՝ 26 մաղում, 2010-ին՝ 22, 2011-ին՝ 26: Սույն ժամանակաշրջանում քոլեջն ունեցել է՝ համապատասխանաբար՝ 274, 258, 235 ուսանող: Չգիտեմ՝ մաղումների այդ թվերը շա՞տ են, թե՞՝ նորմալ: Մինչդեռ մեկ ուսանողի դուրս մնալու փաստն անգամ մեզ համար անցանկալի է, բայց տեղի ունեցածը, ցավով, մեր օրերի համար նաեւ օրինակալի է: Շատ եմ ափսոսում, որ դեռեւս կան անվճարունակ ընտանիքներ: Կան դեպքեր, երբ ուսանողը կամ ծնողը ընթացքում վերակողմնորոշվում են եւ այլ մասնագիտության նախապատվություն տալիս: Կան նաեւ մեր նախաձեռնությամբ հեռացման փաստեր՝ պարբերական բացակայությունների համար: Քոլեջում, առհասարակ, մեծ ուշադրություն է դարձվում հաճախումներին: Սկզբունքն այսպիսին է՝ եկել եւ սովորելու, ուրեմն եւ կանոնավոր հաճախի դասերի: Այո, չհաճախող ուսանողներից ազատվել ենք եւ կազատվեց, չնայած այդ հանգամանքը մեր ֆինանսական վիճակի վրա բացասաբար է ազդեցություն ունեցում:

– Քիչ առաջ խոսեցիք առկա մրցակցային մթնոլորտի, մրցունակ լինելու չափանիշների մասին: Բայց (հավանաբար դեմ չեք) ուսուցանվող մասնագիտությունների արդիականությունը էլ (հետաքրքրալի) ոչ պակաս կարեւոր հանգամանք է: Ի՞նչ կասեք այդ մասին:

– Առանց երկմտելու կարող եմ ասել՝ մեզ մոտ ուսուցանվող բոլոր մասնագիտություններն էլ արդիական են, դրանցից յուրաքանչյուրի հանդեպ կա հետաքրքրություն: Ահա՝ «Հայոց եւ օտար լեզուների դասավանդում», «Ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ», «Նախադպրոցական կրթություն», «Մանկաբար-

ծական գործ», «Դեղագործություն», «Քույրական գործ», «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»: Ընդ որում՝ դրանցից երեքը մասնագիտություններ են, որոնք տարածաշրջանում ուսուցանվում են միմյանց մեզ մոտ՝ «Դեղագործություն», «Ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ», «Նախադպրոցական կրթություն»: Սակայն չենք բավարարվում միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացմամբ եւ ընդլայնմամբ: Մեր խնդիրը, դրան զուգահեռ, նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրեր ներդնելն է: Դա էլ իր պատճառներն ունի: Գործիսի կրթական հաստատություններից եւ ոչ մեկում արհեստագործական ծրագրեր չեն իրականացվում: Եվ դա՝ 90-ական թվականներից, երբ վերացվեց պրոֆտեխնուսումնարանը: Իսկ Գործիսում եւ տարածաշրջանում զգացվում է արհեստագործական կարգերի, մասնագետների կարիք: Մեզ հաջողվեց այս տարի ստանալ երկու մասնագիտություն ուսուցանելու հնարավորություն՝ անվճար տեղերով:

– Այսինքն՝ «Գործիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ն այսուհետ, միջին մասնագիտական կրթական ծրագրերի հետ մեկտեղ, կիրականացնի նաեւ արհեստագործական կրթական ծրագրեր:

– Դուք ճիշտ նկատեցիք: «Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմափորագրում» մասնագիտության լիցենզիայի ավելի վաղ էին ստացել, բայց անվճար տեղեր չէին հատկացվում, ինչի համար եւ չէինք կարողանում կյանքի կոչել այդ հնարավորությունը: Այս տարի 20 անվճար տեղ է հատկացվել այդ մասնագիտության համար, եւ արդեն նկատվում է, որ դիմորդներ կան, միզուցեւ մրցույթ լինի: Արհեստագործական մյուս մասնագիտությունն այսպես է կոչվում՝ «Առաջագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ»: Դրա համար նույնպես 20 անվճար տեղ է հատկացվել: Հարկ եմ համարում նշել, որ այդ ամենը լուրջ նորույթ է Գործիսի ներկայիս կրթական համակարգում: Նպատակ ունենք հաջորդ տարիներին արհեստագործական նոր բաժիններ ավելացնել, որոնք կնպաստեն նաեւ մեր ազգային, ավանդական մի շարք արհեստների պահպանմանն ու զարգացմանը, մասնավոր՝ որ Գործիսը դարձնի շարունակ ազգային արհեստների առումով ունեցել է յուրօրինակ դիմագիծ:

– Փորձե՞ք մի քիչ խորանալ կրթության բովանդակային հարցերի մեջ: Երբեմն խոսակցություններ ենք լսում միջին մասնագիտական եւ արհեստագործական կրթական ծրագրերի անկատարության, կրթական չափորոշիչների բացակայության, մոդուլային ուսուցման ոչ արդյունավետ լինելու մասին:

– Նախ՝ թույլ տվեք հայցել Ձեր ներողամտությունը եւ ասել, որ նման դատողություններ կարող են անել անտեղյակ, միջին մասնագիտական ու արհեստագործական կրթական համակարգի կողքից՝ հարեւանցիորեն, իմիջիայլոց նայողները: Իրականում, մինչդեռ, ոլորտում չկա մի մասնագիտություն, որ չափորոշիչ չունենա՝ հաստատված կրթության եւ գիտության նախարարության կողմից: Բոլոր մասնագիտություններն ունեն չափորոշիչներից բխող ուսումնական ծրագրեր՝ մշակված Մասնագիտական կրթության ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒՋԱԿ) կողմից: Մոդուլային ուսուցման մասին.



# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2009 թվականից անցել ենք ուսուցման այդ ձեւին: Եղած ութ մասնագիտությունից չորսի ուսուցման գործում ներդրված է մոդուլային ուսուցումը: Սյուս չորսի մասին առայժմ խոսք չկա: Բայց դա, թույլ տվեք ասել, ձեւի փոփոխությունն չէ սոսկ: Դա, նախեւառաջ, բովանդակային փոփոխություն է: Վերջին տարիներին մասնագիտական կրթության եւ ուսուցման համակարգում շրջանառվում է կարողություններից միտված ուսումնառություն հասկացությունը՝ «գիտելիքին միտված ուսումնառության» փոխարեն: Կարողություններին միտված ուսումնառության ժամանակ շեշտը դրվում է անձի մեջ մասնագիտական գործունեության համար պահանջվող որակների ձեւավորման վրա՝ միաժամանակ ապահովելով նաեւ անդրաժեշտ գիտելիքների յուրացում: Այսպիսի ուսուցման արդյունքում անձն առավել պատրաստված է լինում աշխատատեղում՝ իր մասնագիտական դերին համապատասխան գործողություններ կատարելու համար, աշխատաշուկայում դառնում է մրցունակ եւ պահանջված: Չենթ քաջցնուն՝ ուսուցման մոդուլային ձեւի եւ բովանդակային հարցերում ռազմավարության փոփոխության հանդեպ կան եւ թեր, եւ դեմ կարծիքներ: Իմ կարծիքով՝ դա աշխատաշուկայից բխող փոփոխություն է եւ, վերջին հաշվով, միտված է ուսանողի կարողությունների զարգացմանը, ուսանողակներին կրթական միջավայրի հետագա ձեւավորմանը: Ուսանողի, դասախոսի աշխատանքի շրջանակն էլ, կարծեք, ձեռքբազատված է ավելորդություններից:

**– Այդքան փոփոխություններ, նորություններ, ուսուցման ոչ ավանդական ձեւերի ներդրում... Կարողանում է արդյոք դասախոսը քայլել այդ նորություններին համընթաց, կարողանում է դասախոսը բավարարել ներկայացվող նորանոր պահանջները: Եվ արդյո՞ք քոլեջի կադրային ներուժը բավարար է նման խնդիրներ լուծելու համար:**

– Նախ՝ Գորիսի պետական քոլեջը տասնամյակներ շարունակ աչքի է ընկել եւ հիմա էլ աչքի է ընկնում կադրային իր ներուժով: Քոլեջն ունի դասախոսներ, ովքեր պատիվ կբերեն յուրաքանչյուր կրթական հաստատության՝ Տաթևիկ Չարությունյան, Էլյանորա Չարությունյան, Լյուդմիլա Գրիգորյան, Աննետա Առաքելյան, Ռոբերտ Դազարյան, Աննա Ասատրյան, բժշկական մասնագիտությունների դասախոսներ Կարինե Յոլյան, Նաիրուհի Թառախյան, Լեւոն Չարությունյան եւ ուրիշներ: Այդուհանդերձ՝ կադրերի որակի բարձրացումը մշտական գործընթաց է եւ վերահսկվում է: ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ՄԿԻԲՍԿ-ի միջոցով մշտապես դասընթացներ եւ կազմակերպվում են տեղերում, եւ կենտրոնում: Պիտի ասել, որ դրանք բավականին արդյունավետ են անցնում, որ այդ դասընթացներին պարբերաբար մասնակցելը պարտադիր է եւ տնօրենի, եւ ուսումնական գծով փոխտնօրենի, եւ բոլոր դասախոսների համար: Միջազգային ծրագրերով նույնպես որակավորման բարձրացման ուղղված միջոցառումներ են իրականացվում:

**– Ուսուցման արդիական մեթոդները, բնականաբար, ենթադրում են ուսումնառության անհրաժեշտ բազա, մեթոդական գրականություն: Որքանով եք ապահովված դրանցով:**

– Մենք, ի դեպ, լավ գրադարան ունենք՝ մոտ վեց հազար կտոր գրականությամբ: Բայց փոփոխություններին համահունչ քայլելու համար ստեղծում ենք նաեւ էլեկտրոնային

(համացանցային) գրադարան: Յուրաքանչյուր դասախոս, ուսանող գիտի, թե տվյալ առարկային առնչվող գրականություն, ուղեցույց, նոր խոսք որտեղ, որ կայքում կարելի է գտնել: Մշակել ենք այդ կայքերի ցանկը եւ առաջարկել դասախոսներին, ուսանողներին: Ուսանողը, դասախոսն անվճար հիմունքով կարող են մեր համակարգչային լսարանում (շուտով՝ նաեւ գրադարանում) օգտվել այդ հնարավորությունից: Էլեկտրոնային գրադարանի ստեղծման ճանապարհին առավել ուշադրություն ենք դարձնում հատկապես նոր մտցված առարկաներին: Ժամանակ առ ժամանակ նաեւ ուղեցույցներ ենք ստանում եւ գործողության մեջ դնում: Մի խոսքով՝ չեն հիշում դեպք, երբ ուսանողը կամ դասախոսն անհրաժեշտ գրականությունը չգտնեն: Եվ, իհարկե, անհրաժեշտ է ուսումնառության բավարար բազա, ինչը կարելուցե՞ք նաեւ Դուք: Միայն մեկ ցուցանիշ՝ վերջին երեք տարում մեր գույքային բազան հարստացել է մոտ 60 մլն դրամ արժողությամբ նոր գույքով: Դրա մեջ մտնում են ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հատկացրածը, մեր սեփական միջոցներով ձեռք բերածը, միջազգային ծրագրերով ստացածը: Շնորհիվ այդ ամենի քոլեջն այսօր ունի մի շարք ժամանակակից լսարաններ ու լաբորատորիաներ՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն առարկաների, լինգվաֆոնային, համակարգչային եւ այլն: Արհեստագործական երկու մասնագիտության համար, ինչի մասին խոսեցինք վերելում, ունենք արդիական բազա: «Ատաղծագործական, մամրահատակագործական, մապկեգործական աշխատանքներ» սասնագիտության համար ընդամենը վերջերս ՄԿԿ-ի զարգացման ծրագրով ձեռք ենք բերել արտասահմանյան արտադրության արհեստանոց: Գրեթե նմանատիպ եւ բարձրորակ սարքավորումներ ենք ձեռք բերել «Հասարակական սննդի կազմակերպում» մասնագիտության համար: Դա էլ՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության շնորհիվ: Ուսումնառության բազայի հարստացումն ու արդիականացումը շարունակական խնդիրներ են եւ այսուհետ նույնպես լինելու են մեր ուշադրության կենտրոնում:

**– Որքանով տեղյակ ենք, քոլեջը նաեւ շենքային խնդիրներ ունի: Ծի՞շտ է:**

– Շենքային խնդիր, որպես այդպիսին, չունենք: Ունենք շենքի պահպանության խնդիր: Մի քանի օրինակ՝ ահավասիկ: Վերջին մոտ երեսուկ տարում քոլեջը տեղակայված է Գորիսի պետական համալսարանի հանրակացարանի մի մասնաբաժնում: Այդ ամբողջ ընթացքում շենքը չի նորոգվել (բացառությամբ տանիքի), եւ բազմաթիվ հարցեր են ի հայտ եկել: Շենքի տանիքից հոսող անձրեւաջրերն ու ձնաջրերը տարիներ շարունակ բափվում են շենքի բակ, որտեղից՝ շենքի հիմքային մաս, ինչը երբեւէ կարող է ծանր հետեւանքներ ունենալ ամբողջ շենքի համար: Այնուհետեւ՝ շենքը զազիֆիկացված չէ, եւ ջեռուցումն իրականացնում ենք վառելիքատուղի կամ էլեկտրական սառիկներով: Ու նման շատ հարցեր: Քոլեջի միջոցներով որոշ մանր-մուկ հարցեր լուծել ենք: Միաժամանակ՝ անցած տարի, Սյունիքի մարզպետարանի հատկացրած միջոցներով, հիմնադրովեցին քոլեջի կոյուղու ցանցը, սանհանգույցները (մինչ այդ ուղղակի ամոթալի վիճակ էր տիրում սանհանգույցներում): Հիմա էլ, դարձյալ Սյունիքի մարզպետարանի հատկացումներով (10 մլն դրամ) վերանորոգման նոր ծրագիր է իրագործվում

շենքի ներսում: Նաեւ ապակեպատում ենք քոլեջի պատուհանները. դա էլ՝ «Ձանգեգուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի օգնությամբ: Արցախյան պատերազմի օրերին հրետակոծության հետեւանքով գրեթե ամբողջապես փշովել-ջարդվել էին պատուհանների պակիները: Տարիների ընթացքում մասնակիորեն վերականգնվել էին պատուհանները, բայց հարցը հիմնովին չէր լուծվել: Եվ պատուհանները հիմնականում փակում էինք ցելոֆանի թաղանթով կամ ֆաներայով: Կոմբինատի աջակցությամբ, կրկնում են, այդ հարցը հիմա լուծվում է: Ի դեպ, կոմբինատը քոլեջին աջակցել է մեկ այլ հարցում եւս: ԱՄՆ-ի խաղաղության կորպուսի միջոցներով էլ 2011թ. վերանորոգել ենք քոլեջի մարզադահլիճը:

**– Պետական քոլեջի տնօրենը, անկախ նրա ով լինելուց, չի կարող ըստ պատշաճի իր պարտականությունները կատարել, եթե կառուցողական համագործակցության մեջ չլինի Սյունիքի մարզպետարանի, Գորիսի քաղաքապետարանի, տարածաշրջանի տնտեսվարող սուբյեկտների, հանրակրթական դպրոցների եւ գործընկեր ու գործատու կազմակերպությունների, կառավարման խորհրդի հետ: Արդյո՞ք համագործակցության ներկա մակարդակը բավարարում է Ձեզ:**

– Նշված կազմակերպությունների հետ համագործակցությունը, բնականաբար, անընդհատ խորացնելու եւ ընդլայնելու անհրաժեշտություն կա, ինչին ձգտում ենք: Դա է պահանջում մեր կրթական հաստատության շափ: Մինչ այդ՝ կա անհրաժեշտ համագործակցություն եւ իշխանության տարածքային ու տեղական մարմինների, եւ գործատու կազմակերպությունների, եւ տարածաշրջանի տնտեսվարող սուբյեկտների հետ: Օգտվելով առիթից շնորհակալական խոսք եմ ուղղում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, կրթության եւ գիտության նախարարության միջին մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Աբրահամյանին, ՄԿԿ-ի զարգացման ծրագրի պատասխանատուներին, Ձանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանին, Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանին, ԱՄՆ-ի խաղաղության կորպուսի ղեկավարներին, «Ռոտամի հէլեքի համակարգ» ՓԲԸ-ի տնօրեն Սասուն Խաչատրյանին, Գորիսի պետական համալսարանի տնօրեն Յուրի Սաֆարյանին, գործարարներ Սպարտակ Հակոբյանին, Գառնիկ Մինասյանին՝ քոլեջին ցույց տված աջակցության եւ, առհասարակ, համագործակցության համար:

**– Երկու խոսք, եթե կարելի է, նախարարության՝ միջին մասնագիտական կրթության ոլորտում որդեգրած քաղաքականության մասին:**

– ՀՀ կրթության եւ գիտության նախարարության համապատասխան բաժինների, վարչությունների եւ մյուս ստորաբաժանումների հետ աշխատում ենք սերտ համագործակցությամբ, առանց որի հնարավոր չէ պատկերացնել աշխատանքի նորմալ կազմակերպումը: Մի կարելուր դիտարկում ունեն, ինչի հետ, կարծում են, համաձայն կլինեն կրթության ոլորտի բոլոր պատասխանատուները. չկա մի հարց՝ կրթության բովանդակությանն ու կազմակերպական ոլորտին առնչվող, որ իրավական առումով հստակեցված, կարգավորված չլինի: Դա վերջին տարիների աշխատանքի արդյունք է, դա նախարար Արմեն Աշոտյանի անձնաուշագրավ ներդրումներից մեկն է:

**– Կուզեմայից իմանալ նաեւ Գորիսի պետական քոլեջի շրջանավարտների ճակատագրի, ինչպես**

**եւ մինչեւ ավարտելն անցկացվող ուսումնական, արտադրական, նախաավարտական պրակտիկայի մասին:**

– Յուրաքանչյուր մասնագիտություն ենթադրում է պրակտիկա, ինչն ուսանողների գործնական հմտություններին ձեւավորման անշրջանցելի գրավականն է, ինչին մենք պատշաճ ուշադրություն ենք դարձնում: Այդ բնագավառում ունենք բազմաթիվ աջակիցներ, որոնցից ուզում են առանձնացնել Գորիս քաղաքի N3 հիմնական դպրոցի (տնօրեն՝ Կարեն Կարապետյան) եւ Գորիսի N3 նախակրթարանի (տնօրեն՝ Մարիետա Մարտիրոսյան) պատասխանատու, կամեցողական, անկեղծ վերաբերմունքը մեր ուսանողների պրակտիկայի հանդեպ: Քոլեջում առանձնահատուկ ակնածանք կա Գորիսի հիվանդանոցի, նրա բազմավաստակ կոլեկտիվի հանդեպ: Առհասարակ շատ մեծ է հիվանդանոցի տնօրեն, բժշկական գիտությունների դոկտոր, ճանաչված վիրաբույժ Սլավիկ Ամիրյանի դերը մեր քոլեջի բժշկական մասնագիտությունների կայացման գործում, ուս, օգտվելով առիթից, մեր կոլեկտիվի հարգանքն են փոխանցում: Պրակտիկայի արդյունավետության բարձրացումն այսուհետ եւս լինելու է մեր ուշադրության կենտրոնում, քանի որ առանց արդյունավետ պրակտիկայի խոսք չի կարող լինել ուսանողների գործնական որակների ձեւավորման մասին: Ինչ վերաբերում է շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը, ապա դա մեր եւ ընդհանրապես հասարակության ցավոտ խնդիրներից է: 2009-ին քոլեջը տվել է 57 շրջանավարտ, 2010-ին՝ 56, 2011-ին՝ 65, 2012-ին՝ 78: Նրանց մոտ 20 տոկոսն է իր մասնագիտությամբ ներկայումս աշխատում: Մոտ 10 տոկոսն էլ կրթությունը շարունակում է բարձրագույն ուսումնական հաստատություններում: Չբաղվածության խնդրի կարգավորումը, անշուշտ, առանձին խոսակցություն է պահանջում: Գործատուների մոտեցումներին էլ երբեմն կարելի է ըմբռնումով մոտենալ: Սակայն, կարծեք, հասել ենք կամ հասնում ենք մի հանգրվան, երբ գործատուի համար որոշիչն այլևս աշխատանքի ընդունվողի պրոֆեսիոնալ հատկանիշներն են, մասնագիտական հմտությունները, տեսական պատրաստվածությունը: Այդ իսկ առումով կարող են բոլոր գործատուներին մի ստույգ երաշխավորություն տալ՝ Գորիսի պետական քոլեջի շրջանավարտ՝ նշանակում է հիմնաբար գիտելիք, անհրաժեշտ հմտություն, կազմակերպվածություն, պատասխանատվության զգացում, քաղաքացիական առողջ կենսակերպ, առաջադեմ աշխարհայեցողություն ունեցող մասնագետ:

**– Չե՞ր պատասխաններից հասկանալի է դառնում, որ քոլեջը նաեւ բազմաթիվ խնդիրներ ունի: Դրանց մի մասին Դուք անդրադարձա՞ք: Այդուհանդերձ՝ որո՞նք են, ըստ Ձեզ, առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները:**

– Կա մի հիմնախնդիր, որ մտահոգում է համակարգի աշխատողներին. դա քոլեջի դասախոսների աշխատավարձի գրեթե երկու անգամ ցածր լինելն է հանրակրթական դպրոցի ուսուցչի աշխատավարձից: Միեւնույն աշխատանքը կատարող երկու մարդու, փաստորեն, տարբեր սկզբունքով ենք վճարում եւ, չգիտեմ ինչ սկզբունքներից ելնելով, միջին մասնագիտական կրթական համակարգի մանկավարժի աշխատանքը համեմատաբար անկարելու է համարվում: Ամառդարացի, չհիմնավորված այդ հանգամանքն է պատճառը, որ մանկավարժական կադրերը հակված են աշխատել նախեւառաջ

հանրակրթական դպրոցում: Անհավասարությունն ավելի շեշտված է դառնում, երբ համեմատության մեջ ենք դնում ավագ դպրոցի ուսուցչի եւ միջին մասնագիտական կրթական հաստատության սկզբունքները: Հարցի շրջանառվող պատասխանը, թե իբր սեփական եկամուտների հաշվին կարելի է բարձրացնել դասախոսի աշխատավարձը, անլուրջ է եւ չի իմանալորված: Երկրորդ հիմնախնդիրն առնչվում է շենքի մերձակայքին եւ թաղամասի հիմնական ճանապարհին: Շենքը, ուսանողական հանրակացարանը, Ըղջիպազի թաղամասի ամբողջ բարձրագիտական դասընթացը ճանապարհի չունեն: Չմռանն այդ ճանապարհը հաճախ դառնում է անանցանելի սովորական մեթեմաթիկ համար եւ վտանգավոր՝ հետիոտն երթուղիների համար: Տիաճ վիճակ է ստեղծվում նաեւ հորդառատ անձրևներից հետո: Այդ անհարմարությունը, որ նաեւ անպատվաբեր է մեր հնամենի քաղաքի համար, շատ թանկ է նստում քոլեջի, ուսանողական հանրակացարանի ու թաղամասի բնակիչների վրա:

**– Շատ կուզեմայից գրուցել նաեւ քոլեջում իրականացվող դաստիարակչական աշխատանքների, ուսանողական ինքնավարության, շարունակական կրթության, դասախոսների ստեղծագործական աշխատանքի, առաջնահերթ խնդիրների եւ ծրագրերի մասին, բայց բերթային մեկ հրապարակման մեջ հնարավոր չէ ընդգրկել մեզ հետաքրքրող հարցերի ամբողջ շրջանակը: Մի հարց, սակայն, չէ՞նք ուզեցնա շրջանցել: Գորիսի պետական քոլեջը մոտ ինը տասնամյակի կենսադրություն ունեցող ուսումնական հաստատություն է: Կարողանո՞ւմ եք լինել այդ հաստատության մերօրյա արժանավոր ժառանգորդն ու տասնամյակների գործի ու ավանդույթների շարունակորդը:**

– Վերջին տարիներին մեզանում այսպիսի մի բան է շրջանառության մեջ դրվել՝ թե՛ն ոչ հայերեն՝ «բրենդ», որը, եթե չեն սխալվում, ապրանքանիշ է կոչվում, սեփական դեմք-դիմազօծի յուրահատկություն է նշանակում, այնքարտ է նշանակում: Գորիսի պետական քոլեջի՝ իսկապես փառաբանված պատմությունն իր իսկ գլխավոր «բրենդն» է: Քիչ կրթական հաստատություններ գիտեմ՝ միջին մասնագիտական, որ այդքան նշանավոր մարդիկ են տվել մեր ազգին՝ ակադեմիկոսներ, գրողներ, գիտնականներ, ճանաչված պետական ու հասարակական-քաղաքական գործիչներ: Իսկ տասնամյակների արգասաբեր այդ երթն անաչմորդել են կրթական գործի անվանի մասնագետներ ու կազմակերպիչներ: Եվ նրանցից յուրաքանչյուրն իրենից կախված ամեն ինչ արել է, որ քոլեջն ըստ արժանավոր կատարի իր առաքելությունը, ինչի համար եւ քոլեջը հիշում է նրանցից յուրաքանչյուրին, ինչի համար եւ քոլեջի փառքի սրահը հիշողություններ է պահում նրանց մասին: Նախավերջին տնօրենը տիկին Ազնեսա Դարբինյանն էր, ով երկու տասնամյակից ավելի գլխավորեց քոլեջը, ծանրակշիռ ներդրում ունեցավ մեր հաստատության զարգացման գործում: Նրա անունը, նրա գործերը քոլեջի պատմության անբաժանելի մասն են: Հիմա խնդիրը տասնամյակների այդ ավանդույթներն արժանավայել կերպով շարունակելու, քոլեջի բարի անունն ու համբավը գալիք սերունդներին փոխանցելու մեջ է, ինչին ձգտում են քոլեջի դասախոսական եւ ուսանողական կոլեկտիվները:

**Հարցազրույցը ԶՄԻՆԵ ՀԱՄԵԼՁՈՒՄՅԱՆԻ**



ԷԶԵՐ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

«Ավանգարդ». Գորիսի շրջկենտրոնի տնտեսությունը



«Ավանգարդ» կոլտնտեսությունը շրջանային ցուցահանդեսում, 1950թ.: Կենտրոնում Սուրեն Բակունցն է՝ փիկնոջ՝ Վարսենիկ Բակունցի հետ:

Որպես նախաբան

Գորիսի «Ավանգարդ» տնտեսությունը կազմավորվել է 1932թ.: Տնտեսությունն ի սկզբանե եղել է բազմաճյուղ՝ անասնապահություն, դաշտավարություն, բուսաբուծություն: Անասնաբուծության մեջ, խոշոր եղջերավորների ֆերմայից գատ, կարեուր ճյուղ են եղել նաև ոչխարաբուծությունը, խոզաբուծությունը, թռչնաբուծությունը: Դաշտավարության մեջ առաջնային տեղ է զբաղեցրել հացահատիկային, այնուհետև բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրությունը, այգեգործությունը եւ ծխախոտագործությունը: Տարիներ շարունակ, լինելով շրջանի առաջատար տնտեսություններից, այն կարելու էր խաղաղ շրջանի տնտեսական զարգացման գործում:

1964թ. կոլտնտեսությունը վերափոխվել է «Ավանգարդ» խորհրդանունով, որտեղ հիմնականում շարունակել է զարգանալ անասնապահությունը, որի համար եւ այն կոչվել է կաթնամսանապահական խորհրդանունով:

Շրջանում գյուղմթերքների պահանջարկի մեծ մասն ապահովել է այդ տնտեսությունը /կաթ, միս պահիր, սուր, հացահատիկ, բանջարեղեն/: Ձեռք բերած բարձր ցուցանիշների համար տնտեսությունը բազմիցս արժանացել է մրցանակների, պատվոգրերի, իսկ 1976թ.՝ «Պատվո ճշան» շքանշանի:

Խորհրդանունով գոյություն է ունեցել մինչև 1991թ. հունիս ամիսը: Հիմնականում կառավարվել է շրջանի կառավարության կողմից: Տնտեսությունը ղեկավարել են Արմենակ Ջիվուղայանը, Արմենակ Մաշուրյանը, Սուրեն Բակունցը (1937 - 1942թթ.), Տիգրան Բուրջումյանը (1942-1944թթ.), Սուրեն Բակունցը (1944 - 1983թթ.), Ջեյիկ Ջիվուղայանը (1983-1991թթ.):

Մեծ հայրենականի օրերին

Խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով զբաղված «ավանգարդիներին» պատերազմի լուրը հասավ ֆերմայում ու դաշտում, այդուհետև բանջարանոցում: Պրկված, մի բռունցք դարձավ կուռ կոլեկտիվը, վերակառուցեց իր աշխատանքները պատերազմական իրավիճակին համապատասխան: Բոլորը գիտակցում էին պահի լրջությունը: Բանակին հաց էր պետք, միս ու գյուղատնտեսական այլ մթերքներ: Անհրաժեշտ էր ապահովել բանակի թիկունքը: Աշխատանքային 35 օրում «ավանգարդիները» բարձր ցուցանիշներով ավարտեցին հացահատիկային կոլտնտեսության բերքահավաքը եւ սկսեցին աշխատանքային գործընթացը: Կատարվեց 565հա աշխատանք, պլանը գերակատարվեց 43հա-ով: Ծխախոտագործության բնագավառում կոլտնտեսությունը նույնպես հաջողություններ ունեցավ: 10հա-ից նախատեսված 80ց-ի փոխարեն պետությանը հանձնվեց 100ց ծխախոտի բարձրորակ հումք:

Անասունների ձնեռային շրջանը եւս դիմավորեցին կազմ ու պատրաստ: Վերանորոգվել ու կարգավորվել էին բոլոր անասնաշենքերը: Ստեղծված էր կերի անհրաժեշտ բազա: 105 անասնապահից տասը տախանովական էր, 15-ը՝ հարվածային: Պատերազմի բոթը ստանալուն պես Կարմիր բանակ էին մեկնել տասնյակ «ավանգարդիներ»: Նրանց փոխարինեցին նորերը, ու՛քեր, հմուտ ու երկարամյա աշխատողների փորձը յուրացնելով, կարճ ժամանակում լավագույնս դրսևորեցին իրենց:

Կոլտնտեսության ուշադրությունից դուրս չէին մնում Կարմիր բանակ մեկնածների ընտանիքները: Նրանց հասցնում էին անհրաժեշտ մթերքներ, նավթ, աղ: Ձմեռամուտին կոլտնտեսությունը 37 ընտանիքի ապահովեց փայտով:

Առջեւում 1942-ի գարունն էր: Ապաստում էր ծանր, փորձություններով լի գյուղատնտեսական տարի: Կարելու էր գարնանացանին ըստ պատշաճի նախապատրաստվել: Վերանորոգվեցին բրիգադ-

ներում եղած 20 եւ պահեստի 2 գուբանները, բոլոր լծասարքերը կոմպլեկտավորվեցին ըստ բրիգադների եւ օղակների: Կոլտնտեսության ունեցած 180 եզը խնամվում ու պահվում էր առանձնահատուկ հոգածությամբ: Դաշտավարական բրիգադները զարնանը եռանդով գործի անցան: Նրանք ոչ միայն կատարում ու գերակատարում էին առաջադրանքները, այլև մեծ ուշադրություն էին դարձնում ցանքի որակին: 338 հա գարնանացանի առաջադրանքից 1942թ. ապրիլի 8-ի դրությամբ կատարվել էր 182հա: Մրցակցության էին ելել Տիգրան Բուրջումյանի եւ Մուշեղ Արզումանյանի N3 եւ N5 բրիգադները: «Ավանգարդիները» սեղծ ժամկետում ավարտեցին 1942-ի գարնանացանը: Դաշտ էր դուրս բերվել վերանորոգված ու լծասարքերով ապահովված 24 գուբան, առանձնացվել էր 540ց բարձրորակ սերմացու:

Նույն հաջողությամբ տնտեսությունն իրականացրեց նաև խոտհունձը՝ 400հա խոտհարքից հավաքելով 7000ց խոտ: Անասնակերի հարուստ բազա ստեղծելու նպատակով թափով ու կազակերով էին տարվում խոտհնձի աշխատանքները: Առաջավոր կոլտնտեսականներ Ս.Գիշունցը, Բ. Հովակիմյանը, Ա.Յոլյանը, Ջ.Ջհանգիրյանն օրական հնձում էին 0.2-0.3հա դաշտամաս: Նախատեսված 100 խոտի փոխարեն 150-200 խոտ էին կապում կոլտնտեսուհիներ Ա.Թովիչունցը, Գ.Բաղիրյանը, Շ.Միրաքյանը:

1942թ. «ավանգարդիները» հացահատիկի բերքահավաքը սկսեցին հուլիսի 20-ին: Կազմակերպված աշխատանքի շնորհիվ, նաև ռազմաճակատի ու հայրենիքի հանդեպ պարտքի գիտակցումով, բերքահավաքն ապահովեցին հնձվորներ Ս.Մեծլույսյանը, Ա.Միրոսյանը, Խ.Բաղիրյանը, Ա.Բակունցը, հնձվորուհիներ Ա. Պետրոսյանը, Օ. Շալունցը, Աստղիկ ու Լեռնիկ Թանգյանները, Լ. Օհանյանը, Ա. Քարամյանն ու շատ ուրիշներ, ու՛քեր օրվա առաջադրանքը 250%-ից ավելի էին կատարում: Օրական եր-

կու արտադրական նորմա էին կատարում խուրճ կրող սայլապաններ Ա.Մարտիրոսյանը, Մ.Բաղիրյանը, Ս. Դաշունցը, Վ. Գեորգյանը:

Կոլտնտեսության վարչությունը սահմանել էր դրամական մրցանակ՝ 2000 ռուբլի: Այն շահեց Պատվական Քարամյանի բրիգադը, որը ժամանակին կատարեց 183հա հունձ: Նրանից ընդամենը մեկ օր հետո հունձն ավարտեց Արվինդի Քարունցի բրիգադը: Տարին բերքառատ էր: 20հա աշխատանքային միջին բերքատվությունը 1հա-ից կազմեց 16ց: Ցորենի միջին բերքատվությունը գերազանցեց շրջանի համար նախատեսված նորման: Առատ էր նաև հաճարի բերքը: Կալվորներ Շ.Պետրոսյանը, Հ.Աբրահամյանը, Հ.Դաշունցը եւ ուրիշներ օրական 400-ի փոխարեն կալում եւ ստանում էին 800կգ բերք: Տնտեսությունը Կարմիր բանակի հացի ֆոնդին հատկացրեց 130ց հաց:

Կոլտնտեսությունը հատուկ ուշադրություն էր դարձնում ծխախոտագործությանը: Հինգ օրում կատարվեց 5հա ծխախոտի սածիլում՝ նախատեսված 2,5հա-ի փոխարեն: Ծխախոտագործուհիներն ամեն օր վաղ առավոտյան աշխատանքի դուրս գալով տուն էին վերադառնում ու շերտերով օրվա առաջադրանքները կատարելով 130-140 տոկոսով: Մշակվում էր 16հա պլանտացիա: Այդ գործով բարեխղճորեն զբաղվում էին Ռուբեն Թելունցը, Լուսին Քարունցը, Արվինդի Մաշուրյանն ու Վարսենիկ Բակունցը: Աճեցված սածիլի կայուն բազա ունենալը, նաև ցանքը ժամանակին սկսելը, խնամքով ու արագ կատարելը նպաստեց, որ բարձր բերքի ստացման համար ամուր հիմքեր դրվեին:

1942-ի սեպտեմբերին արդեն պետությանը էր հանձնված ծխախոտի 10ց բարձրորակ հումք, շարված էր 50000 թելանետր, չորացված՝ 20ց ծխախոտի հումք:

Լուրջ ուշադրություն էր դարձվում մոլախոտերից ցանքերը մաքրելու աշխատանքներին: Օրական 250-ից ավելի կանայք էին դուրս գալու դաշտային աշխատանքի: Արևիստ Բաղիրյանը, Օվսաննա Քարունցը, Մանուշակ Տոռոզյանը եւ ուրիշներ օրական քաղահունձ էին 3500ց/մ ցանք՝ առաջադրանքը կատարելով 150 տոկոսով:

1942թ. աշնանն այգիները բարձր բերք տվեցին: «Ավանգարդիները» նախատեսված 60 հազար ռուբլու փոխարեն 72 հազար ռուբլու եկամուտ ստացան:

Հացահատիկային կոլտնտեսության բերքահավաքն ավարտելով՝ կոլտնտեսությունը դրան զուգահեռ նախապատրաստվում էր հերթական աշնանացանին, նաև պատրաստվում էր դիմավորել անասունների մտորային շրջանը: Պետական պլանը խոշոր եղջերավոր անասունների գծով կատարված էր: «Ավանգարդիները» վստահ էին, որ պատվով կկատարեն իրենց առաջադրանքները: Հերոսաբար աշխատելով թիկունքում՝ կարողանում էին ռազմաճակատին ապահովել հացով, նաև իրենց վաստակից մասնաճանկ կատարել հոգուտ ռազմաճակատի: Այսպես՝ 1943 թվականին, ինչպես տեղեկանում ենք «Ստալինյան դրոշմով» թերթից, կոլտնտեսականների ընդհանուր ժողովում «Հայաստանի կոլտնտեսության» տանկային շարայում կազմավորելու լուրն ընդունվել է մեծ ոգևորությամբ: Գութանավար Գրիգոր Դոլունցը, ում որդիները պատերազմ էին մեկնել, վաստակելով 1700 աշխուր, իր վաստակից տանկեր կառուցելու համար նվիրեց 700 ռուբլի: Ժողովին ներկա գտնվողները եւս նվիրատվություններ կատարեցին. հավաքված գումարը կազմեց 60 հազար ռուբլի:

1941-43թթ. աշխատանքային ռիթմը շարունակվեց նաև պատերազմական հաջորդ տարիներին: Թիկունքի աշխատողները տքնաջան, համառ աշխատանքով իրենց համեստ ներդրումն ունեցան հաղթանակի ապահովման գործում: Նաև նրանց՝ «ավանգարդիներին» աշխատանքի շնորհիվ մոտեցավ հաղթանակի գարունը: Նախկին «ավանգարդիներից» շատերը պատերազմից տուն չեկան՝ դարձան արջուր-հուշարձան, մի մասը վերադարձավ հաշմանդան դարձած եւ օգնության կարիք ունեղ, մյուսները կրկին անցան խաղաղ աշխատանքի:

Հեղափոխության տարիներ

Պատերազմից հետո երկիրն աստիճանաբար շտկեց իր մեջքը: Նոր ժամանակներ էին: Հարկավոր էր շատ աշխատել եւ վերացնել պատերազմի հետքերը, բուժել վերքերը: Մարդիկ անցան սովորական աշխատանքային ռիթմի, բայց անելիքները շատ էին: Պիտի արտադրվեին ավելի շատ գյուղմթերքներ, պիտի, պիտի...

«Ավանգարդ» կոլտնտեսության կաթնամսանապահական ֆերմայի աշխատողները հետպատերազմյան տարիներին կատարեցին անասնաբուծության զարգացման եւ մթերատվության բարձրացման առաջադրանքները:

Տնտեսությունը ճիշտ ղեկավարելու եւ գյուղատնտեսական աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու շնորհիվ կոլտնտեսության աշխատողներն իրենց վաստակած աշխարհի դիմաց ստանում էին մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ, դրան:

Կոլտնտեսության վարչության նախագահ Սուրեն Բակունցը միշտ էլ կարելու էր հաղթանակները, բայց եւ քննադատորեն վերաբերվում աշխատանքում եղած թերություններին: Հատկապես կոլտնտեսության հաշվետու ընտրական ժողովները գործարար նշանակություն էին ունենում հետագա աշխատանքներն ավելի լավ կազմակերպելու եւ արտադրության վերելքն ապահովելու համար:

1949թ. կոլտնտեսությունը գերակատարեց անասնաբուծության զարգացման պլանները՝ նախորդ տարիների համեմատությամբ բարձրացնելով մթերատվությունը: Իր մշակած 30հա ծխախոտի պլանտացիայից կոլտնտեսությունը պետությանը հանձնեց 219ց հումք: Նախատեսված 921կգ բոժոժի դիմաց պետությանը հանձնվեց 1702կգ բարձրորակ բոժոժ, որի համար կոլտնտեսությունը պետությունից ստացավ 40 հազար ռուբլի պարգև-հավելում: Այդ տարի, սակայն, մշակված 932հա հացահատիկային կոլտնտեսության ցանքից ցածր բերք ստացվեց: Ունենալով բոլոր հնարավորությունները՝ առաջադրանքը չկատարվեց, ինչը կոլտնտեսության ժողովում դարձավ լուրջ քննարկման առարկա:

Գ.Տառնցյանը Գորիսի «Ավանգարդ» կոլտնտեսության ոչխարաբուծներից էր: «Կարմառավորներն առաջավոր փորձով» հողվածից (1954թ., «Ստալինյան դրոշմով») տեղեկանում ենք, որ ոչխարաբուծության զարգացման եւ մթերատվության բարձրացման ուղղությամբ ձեռք բերած բարձր ցուցանիշներին համար նա արժանացել է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունքին: Վերադառնալով ցուցահանդեսից՝ նա որոշել է լուրջ ուշադրություն նվիրել ոչխարների արհեստական









# «Ավանգարդ». Գորիսի շրջկենտրոնի տնտեսությունը

Սկիզբը՝ էջ 15

Ֆունդերն ավելացան երկու անգամ, իսկ ամեն մի աշխօրի դիմաց տրվելիք գյուղատնտեսական մթերքները դրամական արտահայտությամբ գերազանցեցին մի քանի անգամ:

Տարիներն անցան մեկը մյուսի հետեւից: Յուրաքանչյուր տարի իր հետ մոր խնդիրներ բերեց, բայց եւ առանձնահատուկ էին ձեռքբերումներն ու հաջողությունները, մաեւ՝ պարզեւները թե՛ տնտեսության, թե՛ նրա աշխատողների համար:

1982թ. հունիսի 28-ին «Ավանգարդ» սովխոզի մշակույթի պալատում տնտեսության կուսակցական կազմակերպության, արհկոմի նախաձեռնությամբ Սուրեն Բակունցի ծննդյան 70 եւ աշխատանքային գործունեության 50-ամյակներին նվիրված երեկո կազմակերպվեց: Շատերը կհիշեն այդ միջոցառումը: Կհիշեն ասված բարի ու լավ խոսքերը, որ հնչեցին մարդու, անհատի, քաղաքացու, զինվորի, հմուտ կազմակերպչի, իր գործի

գիտակ քաղաքացու հասցեին: Եվ բարձրատիճան հյուրերը, եւ մյուս ելույթ ունեցողները փորձեցին պարզապես մարդու արած-դրածը գնահատել: Իսկ տոնական այդ օրը Սուրեն Բակունցի համար չէր տարբերվում մյուս օրերից, դարձյալ աշխատանքային էր, ինչպես միշտ: Ավելի ազատ ու լավ էր զգում իր աշխատողների հետ: Նրանց հետ, ուն ցավը, հոգսը մաեւ իրենց էր: Երկար ու ձիգ տարիներ նրանց հետ էր աշխարհին բարի լույս ասում, մի կտոր հաց կտրում, կիսում իր մտքերն ու խոհերը, խորհրդակցում, պահանջում, մաեւ անասանունորեն հարազատի պես նվիրվում նրանց: Եթե իրեն հյուրասիրության էին կանչել, անպայման պիտի դաշտում աշխատողի համար բաժին տաներ, ուշ ժամին տուն հասցներ նրան կամ տնեցիներին աջակից լիներ: Մարդկանց հոգան իրենց էր համարում:

1982թ. «Ավանգարդ» սովխոզի բանվոր-ծառայողների ընդհանուր ժողովը, լսելով սովխոզի տնօրեն Ս.Բակունցի հաշվետվությունը

1982թ. կատարած աշխատանքների մասին, այն գնահատեց բավարար: Ժողովի արձանագրությունից տեղեկանում ենք, որ պլանով նախատեսված 1370 գլուխ խոշոր եղջերավոր անասունների փոխարեն «ավանգարդ-ցիներն» ունեն 1380 գլուխ, այդ թվում՝ 450-ի փոխարեն 458 գլուխ կով, 5000-ի փոխարեն 5730 գլուխ ոչխար, ունեն մաեւ 282 մեղվաբնակներ: Նրանք նախատեսված 6896 ց հացահատիկի փոխարեն արտադրել են 7220 ց, 9700 տ կաթի փոխարեն՝ 9828 տ կաթ, 1460 ց մսի փոխարեն՝ 1500 ց, 107ց բրդի փոխարեն՝ 112 ց բուրդ: Կատարվել են արտադրված մթերքի վաճառքի տարեկան պլանները մույսպես:

1983 թվականին Սուրեն Բակունցն անցավ վաստակած հանգստի, նրան փոխարինեց տնտեսության գլխավոր անասնաբույծ Ջեւիկ Զիլֆուրայանը:

ԷԼՆԻՐԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

## ԳՈՐԻՍԱՊԱՏՈՒՄ

### Սուրեն Բակունցի Նամակը Համո Յուլանին

Սկիզբը՝ էջ 15

արդեն քանի տարի հայերեն ոչինչ չէր կարդացել, նույնիսկ՝ նամակ: Եվ այդ գորշավուն ծրարում ամփոփված ջերմ, անմիջական ու անկեղծ բառերը նրա դեմ բացեցին իր համար ամենամեծ աշխարհի՝ հայրենի եզերքի հեքիաթային պատկերները: Նա ճախրեց այդ լեռնոտ, քարոտ, անտառոտ, անձավոտ պատկերների գրկում, որտեղ մնացել էր իր անդարձ մանկությունը: Նրա կարոտը ձգվեց հասավ Դրնգանի, Ղաթրիմի, Մանիշկա ձորերը, որի կտրվածքներում անցել են պատանեկան միամիտ խենթությունները, փարվեց խճապատ Լաստ սարի լանջին, բարձրացավ Մեղրաբերո՞թի գագաթը, որի ճեղքերից, թեպետ ահաբեկված վայրի մեղուններից, իրենք սեւ մեղր էին թռչում, խճճված Սինդարի անտառի մեղվածքներում, որտեղից ցախ էին կրում ընկերներով... Սակայն այդ անհոգ, երբեմն ամմիտ խաղերի նմանվող պոռթկումները երկար չչարունակվեցին իր սերնդի համար, որովհետեւ շուտ մարեց իր տարեկիցների հրճվածքի փարոսը, իրենք ստիպված եղան զրեթե մանկական տարիքում լրջորեն մտահոգվել, նույնիսկ կռվել, որ ապագա կյանքի բարդ հորձանուտում չվիշվեր, չխորտակվեր ուրիշ երեխաների երջանկության նավակը:

«Չիմա ո՞ւր են իմ մանկության կածանները, խճախեղդ են ու խոտածա՞ծկ, որտե՞ղ են այդ կածանները տրորած իմ ընկերները՝ կռվո՞ւմ, թե՞ թիկունքում են, ապրո՞ւմ են, թե՞ ընկել են մարտում»...

Նա մեջքի վրա պառկած հիշում էր, հիշո՞ւմ, եւ սիրտը գարնան արեւի ձգտող երանի նման թռչում էր դեպի լեռները հայրենի:

– Պատերազմն ավարտվի՞՜ անպայման կզնամ... Իսկ մերոնք ի՞նչ են անում հիմա, ո՞նց են ապրում՝ Ղազարը, Լեւոնը, Տիգրանը, Յուլանց տոհմի մեծ ու փոքրը...

Մտքերը ճախրեցին հոր գիրկը: Խե՛ղճ հայր: Կնոջ մահից հետո նա չամուսնացավ, պանդխտի նման դեգերեց քաղաքից քաղաք, սկզբում գնաց Թովուզ՝ աղբբեշանական փոքրիկ շրջկենտրոնը, հետո եկավ հայտնաբերական քաղաք Ալավերդի, աշխատեց պղնձահանքային կոմբինատում եւ ապրեց մեծ աղջկա՝ Լիզայի մոտ: Լուրերից պարզվում է, որ նրան մեղել են հայրենի եզերքում, որից հետո Մեղրակը լքել է Գորիսը՝ պետությանը հանձնելով իր ու եղբոր՝ Գալուստի երեք շենքերը: Դա պատահել է այն ժամանակ, երբ սկսել են քանդել Ռուսաց եկեղեցին, եւ Մեղրակը, իր ընկեր Վաների հետ մոտենալով, դժգոհությամբ վրա է տվել:

– Ա՛յ մարդիկ, եւ Վաների փողերն այրեցիք, ասելով, թե դա Նիկոլայ ցարինն է... Բա եկեղեցին ինչո՞ւ եք քանդում, դա էլ հո ցարինը չէ՞...»

– Եկեղեցու քարը տանում ենք ԳԷՍ-ի համար, – աղմուկի մեջ բղավել է մեկը, – ԳԷՍ սարքենք, լույս ստանանք:

– Մեղա՛ք եզ, Աստված, – խաչակնքել է Մեղրակը, – ես քարաշատ երկրում քար չկա՞, որ արվեստի նմուշ եք քանդում:

Այդ ժամանակ մոտեցել է մի պաշտոնյա եւ սաստող տոնով, հեզանքով Ֆշշացրել.

– Ի՞նչ ես դուրս տալիս, հենա քո շենքերն էլ կքանդենք...

– Չեզանից ամեն բան կսպասվի, – նրա երեսին շարտել է Մեղրակը եւ հեռացել:

Այդ դեպքից հետո նրան շատ տարան-բերին: Մեղրակը օրինական կարգով շենքերը հանձնեց պետությանն ու լքեց լեռնաշխարհը: Տառապանք ու չարչարանք տեսած, օջախից գրկված հայրը, սակայն, միշտ բարձր էր պահում ոգու կրողը, նամակներում գրում էր, որ իրենք լավ են, ողջ-առողջ...

– Միայն դու լավ մնա, քեզ հեռու պահի ցրտից ու վտանգից, – խորհուրդ է տալիս հայրը:

Իսկ ո՞վ էր նամակագիրը: Գուցե իր պատանեկության տարիների ընկեր է, որին չի կարողանում հիշել, գուցե բոլորովին երիտասարդ է եւ նո՞ր է տնտեսությունը ղեկավարում եւ օգնության կարիք է զգում, գուցե... Նա ոչ մի կերպ չկարողացավ պատկերացնել Սուրեն Բակունցին, բայց սրտում ջերմություն կար այդ մարդու նկատմամբ...

ՄԱՐՏԻՆ ԶԻՆՏՈՒՂԱՐՅԱՆԻ «Պրոֆեսոր Սուրեն Յուլան» գրքից